

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Իլիամ Ալիեւ Անել Դրութեան Առջեւ

2016 թուականի ապրիլեան քառօրեայ պատերազմէն ասդին վերջին օրերուն Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի կ'ունենան ամենէն սաստիկ ռազմական գործողութիւնները: Յուլիս 12-ին, Տաւուշի շրջանի դիրքերուն ուղղութեամբ կատարուած ոտնձգութիւնը կասեցուելէ ետք, թշնամին սխալ հաշուարկներ կատարելով սկսաւ ռմբակոծել Հայկական սահմանային կէտերը, որմէ ետք Հայկական Բանակը անձաւ յստակ ու ծրագրաւորուած պատժիչ գործողութիւններու: Արդիւնքը եղաւ այն, որ ատրպէյճանական կողմը ունեցաւ մարդկային, ռազմական եւ հաւանաբար նաեւ դիրքային զգալի կորուստներ:

Վերջին օրերուն մղուող մարտերու ընթացքին Հայոց Բանակը ոչ միայն կարողացաւ հաստատել օդային հաւասակշռութիւնը, այլ՝ նախաձեռնութիւնը իր ձեռքը վերցնելով չէզոքացուց հակառակորդի ցարդ վայելած առաւելութիւնը: Ապրիլեան պատերազմի ընթացքին Իսրայէլի կողմէ հայթայթուած անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ) կարողացած էին բաւական ազատ եւ արդիւնաւետ գործել՝ խլելով մեծ թիւով մարդակային զոհեր: Անցնող չորս տարիներու ընթացքին Հայաստան իր ուշադրութիւնը կեդրոնացուց տեղական ԱԹՍ-ներու արտադրութեան վրայ: Այժմ, այդ սարքերը գործադրութեան դրուելով ցոյց կու տան իրենց արդիւնաւետութիւնը: Աւելին, անխցելի նկատուող իսրայէլական ԱԹՍ-ներու առասպելը եւս քանդուեցաւ, երբ հայկական բանակը կարողացաւ կործանել այդ սարքերէն առնուազն մէկը: Ընդհանուր արմամբ Ատրպէյճան կորսնցուց 10 նման սարք:

Վերջին իրադարձութիւններ եկան անգամ մը եւս ցոյց տալու Ատրպէյճանի բռնապետ Իրիւսի Ալիեւի անկարողութեան աստիճանը: Ինք որ, ամէն օր հանդես կու գար ռազմատենչ հռետորաբանութեամբ ու պատերազմի սպառնալիքներ կը հնչեցնէր՝ հողեր ազատագրելու մասին, այժմ ձայնը քաշուած, կը բաւարարուի յոխորտալով, որ մէկ սանթրոններ հող չեն տուած: Այսպիսով, Ալիեւ կը փորձէ հերթական պարտութիւնը ներկայացնել որպէս յաղթանակ: Սակայն, Ազերի ժողովուրդը անգամ սկսած է կասկածով մօտենալ իր երկրի քաղաքական ու զինուորական ղեկավարութեան մատուցած տեղեկութիւններուն հանդէպ ու այդ բոլորի մասին իր տեսակէտները կը յայտնէ ընկերային ցանցերուն միջոցաւ:

Ատրպէյճան Կը Յայտնէ Բարձրաստիճան Զինուորականներու Կարուստի Մասին Հայկական Կողմը Ունի Չորս Չոհ



Ատրպէյճանեան կործանուած անօդաչու թռչող սարքերէն մին

Ատրպէյճանեան ուժերը Կիրակի Յուլիս 12-ին, Տաւուշի կողմէն հայկական սահմանը խախտելու փորձ կատարած են ու հանդիպելով դիմադրութեան ետ շարտուած են: Հայկական ուժերը միայն կանխազգուշացնելէ ետք կրակ բացած են արդէն երկրորդ անգամ սահմանը հատել փորձող ուժերուն, իսկ հակառակորդը կորուստներ տալով լքած է շրջանը:

Յաջորդ օրը, հակառակորդը դարձեալ կրակ բացած է Տաւուշի մարզի հայկական սահմանապահ դիրքի ուղղութեամբ: Թշնամին նաեւ

կատարած է ներթափանցման փորձ ու կորուստներ կրելով ետ մղուած է: Ատրպէյճանական կողմը հաստատած է չորս զինուորներու մահը:

Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան մամուլի քարտուղար՝ Շուշան Ստեփանեանի փոխանցումով՝ Յուլիս 14-ի առաւօտեան Ատրպէյճանի զինուած ուժերը հարուածային անօդաչու սարքով թիրախաւորած էին Բերդի քաղաքացիական ենթակառուցուածքները: Բերդի հրետակոծու-

Փաշինեան Ներկայացուց Ազգային Անվտանգութեան Նոր Ռազմավարութիւնը

Վարչապետի գլխաւորութեամբ՝ Յուլիս 10-ին, Երեւանի մէջ կայացած Անվտանգութեան Խորհուրդի նիստին, որու ընթացքին նաեւ ներկայացուած է Ազգային անվտանգութեան նոր ռազմավարութիւնը, Նիկոլ Փաշինեան յայտարարած է, թէ սերած են հայկական լեռնաշխարհի, հայկական թագաւարութիւններու, անոնց կարգին՝ Կիլիկեան թագաւորութեան:

«Հայկական պետութիւնը հայ ժողովրդի գոյութեան եւ զարգացման միակ երաշխաւորն է: Հետեւաբար հայկական պետութիւնը պէտք է գոյութիւն ունենայ յաւիտեան, որովհետեւ հայ ժողովուրդը պէտք է գոյութիւն ունենայ յաւիտեան», - շարունակած է Փաշինեան՝ նշելով. «Հայ ժողովրդի ազգային արժէքներն են՝ հայոց պետականութիւնը, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը, Հայոց

Մայր Աթոռը Կը Դատապարտէ Սուրբ Սոփիայի Տաճարը Սզկիթի Վերածելու Անգարայի Որոշումը

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ցաւով արձանագրեցինք տակաւին քանի մը օր առաջ՝ Յուլիս 10-ին, Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ռեճեփ Թայէպ Էրտողանի կողմէ ուղղափառ Եկեղեցիներու եւ քրիստոնէական աշխարհի համար կարեւոր նշանակութիւն ունեցող Սուրբ Սոփիայի տաճարը թանգարանէն մզկիթի վերածելու որոշումը», - յայտարարած է Ամենայն Հայոց Գարեգին երկրորդ կաթողիկոսը:

«Հակառակ համաքրիստոնէական տարբեր կազմակերպութիւններու, եկեղեցապետերու ու քաղաքական առաջնորդներու կոչերուն՝ թրքական կառավարութիւնը ընդունեց միակողմանի ու դատապարտելի որոշում՝ ասով իսկ խախտելով Թուրքիոյ մէջ ազգային կրօնական փոքրամասնութիւններու իրաւունքները: Ցաւով կը նշենք, որ միլիոնաւոր քրիստոնէաներու կոչերն ու անհանգստութիւնները անտեսուեցան, հաշուի չառնուեցաւ նոյնիսկ ԵՊՄԻՆՍԲՕ-ի կողմէ Սուրբ Սոփիայի տաճարը համաշխարհային մշակութային զանաւարանին մէջ ներառուած ըլլալու փաստը», - ընդգծած է Վեհափառը:

«Թուրքիոյ կառավարութեան


Լոյս Տեսաւ «Մասիսի» Երկարամեայ Խմբագիր՝ Տօթ. Արշակ Գազանճեանի Առաջնորդող Յօդուածներու Հաւաքածոն

Ընթերցողի սեղանին է «Մասիս» շաբաթաթերթի նախկին երկարամեայ խմբագիր՝ Տօթ. Արշակ Գազանճեանի գրիչով տարիներու ընթացքին լոյս տեսած առաջնորդող յօդուածներու հաւաքածոն:

«Մտորումներ» խորագիրը կրող 500 էջերէ բաղկացած հատորին մէջ խոսացուած մեր ազգային ու հայրենական կեանքի առօրեայ մտահոգութիւններուն եւ անոնց շուրջ «Մասիսի» եւ զայն հովանաւորող ՍԳ Հնչակեան Կուսակցութեան տեսակէտներն ու դիրքորոշումները:

Տարբեր ժամանակներուն լոյս տեսած գրութիւններն ու քաղաքական մեկնաբանութիւնները կը պահեն իրենց այժմէականութիւնը եւ շատ լաճախ կը ներկայացնեն պատմականը մեր համայնքային կեանքին:

Գրքի նախաբանին մէջ Արշակ Գազանճեան մտաւորականի ու խմբագրի վաստակին մասին իրենց վկայութիւնները արձանագրած են սփիւռքահայ ծանօթ մտաւորականներ եւ յօդուածագիրները: Հատորի խմբագրական աշ-



խատանքները իրականացուցած ու զայն հրատարակութեան պատրաստած է իրաւաբան Ռուբէն Աւշարեան:

Ծրագրուած էր գրքի շնորհանդէս-գինեձօնը կազմակերպել Մայիսին, սակայն համավարակի պատճառաւ ստեղծուած արտակարգ իրավիճակները ստիպեցին որ միջոցառումը առայժմ յետաձգուի:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սահմանի Լարուածութիւնը՝ Ցաւալի Լակմուսի Թուղթ Ներսում. Զերթական Անգամ

ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՆԻ

Յուլիսի 12-13-ին սահմանափակ իրադարձութիւնները դարձան Հայաստանեան ներքաղաքական դաշտի լակմուսի թուղթը, սակայն հերթական անգամ այդ դաշտի ու դասի պետական ու քաղաքական անհամարժէքութեան առումով:

Հայ-ատրպէյճանական սահմանին ծաւալուած յայտնի զարգացումները ֆոնին Հայաստանի ներքաղաքական դաշտում ծաւալուած էր երկու բան՝ կամ լուծութիւն, կամ էլ տեղեկատուա-քարոզչական զազրախօսութիւն, բայց ոչ թէ Ատրպէյճանի, այլ Հայաստանի իշխանութեան հասցէին: Գուցէ դա լինէր ապշելու իրողութիւն, եթէ լինէր առաջին առիթով կամ առաջին անգամ: Աւելին, այդ պարագայում, իհարկէ, լուծութիւնը թուած է ոսկէ տարբերակ, սակայն տուեալ պարագայում խնդիրն այն է, որ Հայաստանում պէտք է ընտրել քաղաքական շարեաց փոքրագոյն վարքագիծը: Պարզուեց, որ Հայաստանի, այսպէս սասած, հիմնական քաղաքական դերակատարները, որոնք բաւականին մեծ աշխուժութիւն են ցուցաբերում այսպէս սասած՝ ներքին հարցերում, սահմանային իրադրութեան պայմաններում ի գործը չեղան ցուցաբերել համարժէք աշխուժութիւն եւ օպերատիւութիւն, յայտնելով իրենց քաղաքական դիրքորոշումները Հայաստանի Հանրապետութեան անվտանգային համակարգի դէմ ոտնձգութեան առիթով: Դա այն պարագայում, երբ անգն աչքով նկատելի էր, որ տեղի ունեցողը ամենեւին հրադարարի սովորական խախտում է: Ընդ որում, խօսքը նաեւ բացարձակապէս այն մասին է, որ Հայաստանի քաղաքական ուժերը պէտք է դադարեցնէին իրենց ներք-

քաղաքական գործողութիւնները, հարցերը եւ այլն: Ամենեւին, ի վերջոյ, Հայաստանը տկար ու անզօր է, որպէսզի ի վիճակի չլինի, սահմանային թէկուզ այդօրինակ իրավիճակներում չկարողանայ մի կողմից ապահովել անվտանգութիւնը, միւս կողմից՝ շարունակել բնականոն կենսագործունէութիւնն ու կեանքը:

Ի վերջոյ, հենց այդ միջոցով է նաեւ գնեւրացուած այն արդիւնքը, որը դառնում է անվտանգութիւն: Բայց, միեւնոյն ժամանակ, այդ բնականոնութեան տրամաբանութիւնը ենթադրում է, որ քաղաքական՝ առաւել եւս հաւակնութիւն ունեցող ուժերը, պէտք է կարողանան ներքին հարցերին գուզահեռ արագ եւ բովանդակային արձագանքելու ունակ լինեն արտաքին իրողութիւնների պարագայում, եւ այդ պարագայում կարողանան տարբերակել ներքին հարցերը անվտանգային համապետական խնդիրներից ու նպատակներից: Մինչդեռ, Յուլիսի 13-ի առաւօտեան, մինչեւ երեկոյ, Հայաստանի քաղաքական որեւէ ուժ, խորհրդարանական որեւէ ընդդիմութիւն, նախկին իշխող համակարգը ներկայացնող որեւէ խմբաւորում չէր ստանձնել իրավիճակին արձագանքելու որեւէ քաղաքական պատասխանատուութիւն, ըստ ամենայնի՝ կողմնորոշուած չլինելու պատճառով, թէ որտեղից եւ ինչ ուղղութեամբ է փշուռ քամին: Սա Հայաստանեան դաշտի եւ դասի տարիների քաղաքական արատն է, ու նաեւ հենց դա է, որ Հայաստանի համար կենսական հրամայական է դարձնում դրանից եւ դրա կողմնակից քաղաքականապէս ազատուելն ու նոր որակի քաղաքական ընտրախաւ ձեւաւորելը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ալիւն Ուզում Է «Զրոյացնել» 20 Տարուայ Ղարաբաղեան Քաղաքականութիւնը

ՆԱՅԻՐԱ ՅԱՅՐՈՒՄԵԱՆ

Ռուսաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը ԱԳՆ-ն հայ-ատրպէյճանական սահմանին՝ Տաւուշի մարզի ուղղութեամբ էսկալացիայի վերաբերեալ յայտարարութեամբ է հանդէս եկել: «Անթոյլատրելի ենք համարում էսկալացիայի շարունակումը, որը սպառնում է տարածաշրջանի անվտանգութեանը: Կոչ ենք անում հակամարտող կողմերին զսպուածութիւն ցուցաբերել եւ խստօրէն պահպանել հրադարարի ռեժիմը», - նշուած է յայտարարութիւնում: Պաշտօնական Մոսկուան պատրաստ է անհրաժեշտ աջակցութիւն ցուցաբերել իրավիճակի կայունացման համար:

Ինչ է պատրաստ Մոսկուան առաջարկել Հայ-ատրպէյճանական սահմանին իրավիճակի կայունացման համար: Կապուած է դա նրա հետ, որ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Ստանիսլաւ Զասը Յուլիսի 13-ին անականակալ նախաձեռնեց ՀԱՊԿ մշտական խորհրդի արտահերթ նիստը, որն աւելի ուշ յետաձգուեց:

Հայաստանը սահմանին տիրող վիճակի մասին յայտնել է եւ ԵԱՀԿ-ին, եւ ՀԱՊԿ-ին, սակայն դիմել են ոչ օգնութեան համար: Հարաւային Կովկասում եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Տոյվօ Կլաւարը «հայ-ատրպէյճանական սահմանին փոխհրաձգութեան» հետ կապուած նշել է, որ «երկու երկրների համար կարեւոր է զսպուածութիւն ցուցաբերել եւ օգտագործել հաղորդակցութեան բոլոր ալիքները ինչպէս ուղիղ, այնպէս էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդութեամբ»:

ԵԱՀԿ-ի հետ ամէն ինչ պարզ է, իսկ ո՞վ է շահագրգռուած, որպէսզի ՀԱՊԿ-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հակամարտութեան մէջ ներգրաւի:

Յուլիսի 12-ի միջադէպից անմիջապէս յետոյ Ատրպէյճանի ԱԳՆ-ի եւ Ալիւնի աշխատակազմի յայտարարութիւններում նշուել է, որ Հայաստանն ուզում է «երրորդ կողմի» ներգրաւել: Գողի վրայ, ինչպէս ասում են, գլխարկը վառուած է. արդեօք ԱԳ նախարար Մամեդիարովը ուզում է «ապացուցել» իր մասնագիտական համապատասխանութիւնը եւ հասնել ռուսական կամ ՀԱՊԿ գործերի մոտաքին հակամարտութեան ռեզիմին: Մինչեւ այժմ Հայաստանը եւ Ատրպէյճանը արգելափակել են նմանատիպ ուժերի մուտքը տարածաշրջան:

ՀԱՊԿ-ը 2016թ. ապրիլեան քառօրեայ մասշտաբային պատերազմից յետոյ չէր համարձակուած նիստ հրաւիրել եւ յայտարարել ռազմական դաշինքի դիրքորոշման մասին, թէեւ կիսաձայն տարածաշրջանն անուանում էր «ՀԱՊԿ պատասխանատուութեան գօտի»:

2016թ. Ապրիլի 15-ին Երեւանում դեռ առաջարկուող տարբերակում սեւով սպիտակին գրուած է, որ նախկին ԼՂԻՄ-ի եւ Լաչինի ամբողջ շրջանի տարածքն է դիտուած ապագայ կարգավիճակային տարածք: Այդ յետոյ՝ արդէն Ռոբերտ

տեղի ունեցաւ ՀԱՊԿ ռազմական կոմիտէի նիստ, որի ժամանակ շրջադարձեց հակամարտութեանը դաշինքի միջամտութեան մասին որոշում: Այսօր իսկ կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Ստանիսլաւ Զասը, որը 2016թ. Բելառուսի ԱՆ քարտուղարն էր, որոշեց հրաւիրել արտահերթ նիստ, որը, սակայն, անորոշ ժամանակով յետաձգուեց:

2016թ. պատերազմի օրերին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն զանգեց ոչ թէ Երեւան, այլ Պաքո: Ապրիլի 4-ին Բելառուսի խորհրդարանը ռազմական նոր դոկտրին ընդունեց, որն արգելում է «Բելառուսին արտասահմանում մասնակցել ռազմական գործողութիւններին»: Այսինքն, Բելառուսը մտադիր է Հայաստանի կողմից մասնակցելու ռազմական գործողութիւններին:

Թուրքական Ղազախստանը եւ Ղրղրզստանը, ինչպէս նաեւ շիական Տաճիկստանը նոյնպէս, դժուար թէ, աջակցեն Հայաստանին: Ստացուած է, որ ՀԱՊԿ անդամներից միայն Ռուսաստանն է, որ Հայաստանին «աջակցութեան» է շտապում: Կարո՞ղ է Ռուսաստանի «աջակցութիւնը» լինել Ատրպէյճանի ԱԳ նախարար Մամեդիարովի համար վերջին առաջադրանքը, թէ ներկայիս սադրանքը Ատրպէյճանի ղեկավարութեան համար պատրուակ է դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման 20-ամեայ քաղաքականութիւնը «գրոյացնելու» համար:

«ԼՐԱԳԻՐ»

Երբ Ստում Են

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Աժ նախկին նախագահ Տիգրան Թորոսեանը հեղինակել է «ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարը» վերտառութեամբ ուսումնասիրութիւն, որի հիմնական թեզերին կարելի է ծանօթանալ հետեւեալ յղումով: Որքան հասկացուած է՝ Տիգրան Թորոսեանը կրկնում է կարծրատիպային գնահատականը, որ 1997թ. «փուլային տարբերակով Լեռնային Ղարաբաղը ԼՂԻՄ սահմաններով մնում էր Ատրպէյճանի կազմում»: 1997 թ. Դեկտեմբերի 2-ին միջնորդների կողմից հակամարտութեան երեք կողմերին՝ Ատրպէյճանին, Լեռնային Ղարաբաղին եւ Հայաստանին, ներկայացուած առաջարկութիւնը ենթադրում էր եռակողմ համաձայնագրի ստորագրում հակամարտութեան զինուած փուլի աւարտի մասին:

Փաստաթղթում խօսք, նոյնիսկ ակնարկ չկայ Լեռնային Ղարաբաղի ապագայ կարգավիճակի մասին, այդ հարցը թողնուած էր ապագայ, բայց դարձեալ՝ եռակողմ, բանակցութիւնների առարկայ: Քաղաքագիտութեան դոկտորի գիտական աստիճան ունեցող

մարդու համար պէտք է պարզ լինի, որ հակամարտութեան զինուած փուլի աւարտի մասին համաձայնագրի լիբրաւ կողմ Լեռնային Ղարաբաղը վերջնարդիւնքում չէր կարող ստանալ աւելի ցածր կարգավիճակ, քան ունէր որպէս պայմանագրի ստորագրող կողմ: Աւելի քան երկու տասնամեակ շրջանառելով կեղծ թէզը, որ «փուլային տարբերակով Լեռնային Ղարաբաղը մնում էր Ատրպէյճանի կազմում»՝ քաղաքական յայտնի շրջանակները միայն մի բան են ուզում արդարացնել՝ 1998թ. իշխանափոխութիւնը, որ տեղի ունեցաւ ժողովրդի թիկունքում՝ օրինական նախագահին հրաժարականի պարտադրմամբ: Տիգրան Թորոսեանը ՀՀ կարկառուն դէմքերից մէկն է եւ նրա վերլուծութիւնը Հայաստանում Ռոբերտ Քոչարեանի նախագահ «ընտրուելու» հակասահմանադրական գործընթացը «վասն հայրենեաց» ոճով արդարացնելու նպատակ է հետապնդում եւ ոչ մի աղերս չունի քաղաքագիտական անաչառութեան հետ: Թէկուզ այն պատճառով, որ նա ստում է՝ ասելով, թէ 1997թ. «փուլային տարբերակով» Լեռնային Ղարաբաղը պէտք է ունենար նախկին ԼՂԻՄ սահմանները, մինչ-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը Որոշեց Մէկ Ամիսով Երկարաձգել Արտակարգ Դրութիւնը

Կառավարութիւնը, Յունիս 13-ի արտահերթ նիստին ընթացքին, որոշեց եւս մէկ ամիսով երկարաձգել Հայաստանի մէջ Մարտ 16-ին յայտարարուած արտակարգ դրութիւնը, դիմակայելու «Քորոնա» ժահրի համաճարակը:

Կառավարութեան նիստին վարչապետը ըսաւ, թէ եւ Հայաստանի Մասնաճարակութեամբ նախատեսուած է, որ բնակչութեան առողջութեան սպառնացող վտանգներու պարագային, անհրաժեշտ է արտակարգ միջոցներ ձեռնարկել, այնուամենայնիւ, օրէնսդրական մակարդակի վրայ արդէն արտակարգ դրութեան ռեժիմից բացի այլ գործիք չկայ արտակարգ գործողութիւններ կատարելու համար:

«Միւս կողմից մենք հասկանում ենք նաեւ, որ արտակարգ դրութիւնն անվերջ երկարացնել հնարաւոր չի եւ պէտք էլ չի, եւ այս ընթացում դեռ նախորդ ամսուանից մենք որոշում ունենք, որպէսզի օրէնսդրական փաթեթ մշակենք, որը մեզ հնարաւորութիւն կու տայ այդ գործիքակազմը կիրառել ոչ թէ արտակարգ դրութեան, այլ արտակարգ իրավիճակի ռեժիմում, որը սահմանափակումներով եւ իր ծանրութեամբ կը լինի շատ աւելի թեթեւ, այսինքն՝ ինքը թիրախաւորուած հենց հակահամաճարակային կանոնների տրամաբանութեամբ կ'առաջնորդուի», - ըսաւ վարչապետը:

Կառավարութեան որոշումէն



Փոխ վարչապետ Տիգրան Աւինեան

յետոյ, Ազգային ժողովը արտահերթ նիստով քննարկեց արտակարգ դրութեան երկարաձգումը: Հարցը ներկայացուցած ատեն, փոխ վարչապետ, պարէտ՝ Տիգրան Աւինեան նշեց, որ պարէտատան կատարած մշտադիտարկումն ու վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ առաջիկայ երկրին մէջ դեռեւս առկայ չէ այն իրավիճակը, որ թոյլ կու տայ վերադառնալու բնական կեանքին, սակայն կան կանխատեսումներ, որ դիմակներ կրելու եւ միւս կանոնները պահպանելու պարագային, հնարաւոր է, որ Սեպտեմբերին աւելի լաւ վիճակ ունենանք:

Ընդդիմութիւնը Կը Փորձէ Ցոյց Տալ, Թէ Իբրեւ Իրենք Կրնան Հուժկու Հանրահաւաքներ Կազմակերպել. Պատասեան

Իմ կարծիքով ընդդիմութիւնը հասարակութեան կը փորձէ ցոյց տալ, թէ իբրեւ իրենք պատրաստ են հուժկու հանրահաւաքներ կազմակերպելու, եւ ահա արտակարգ դրութիւնը իրենց կը խանգարէ: Այս մասին, Յունիս 13-ին, ԱԺ-ին մէջ լրագրողներու հետ զրոյցին, նշեց ՀՀ արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան, անդրադառնալով հաւաքներու իրաւունքի սահմանափակումները հանելու վերաբերեալ ընդդիմադիրներու առաջարկին:

«Բնականաբար դա կեղծ օրակարգ է, իրենք նման հնարաւորութիւններ չունեն, պարզապէս հիմա իրենց համար յարմար առիթ է այդ հարցը անընդհատ բարձրացնելու եւ արձանագրելու, թէ իբր իշխանութիւններն իրենց թոյլ չեն տալիս այդ հուժկու հանրահաւաքները կազմակերպել:

Ինչ վերաբերում է իրաւաչափութեանը, ապա Մասնաճարակութեան շատ հպանցիկ ուսումնասիրութիւնը կը վկայի, որ առողջութեան պահպանութիւնը հաւաքների սահմանափակման հիմք կարող



ՀՀ արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան

է լինել: Այսինքն սա ամբողջութեամբ իրաւաչափ ու համաչափ է: Հենց այնպիսի իրավիճակ լինի, որ հաւաքների ազատութիւնը էապէս չվտանգի առողջութեան անվտանգութիւնը, կառավարութիւնը նման որոշում կը կայացնի:», - ընդգծեց Պատասեան:

«Այդ Յաջորդ Իշխանութիւններուն Դեռ Շատ Ժամանակ Կայ». Ալէն Սիմոնեան

Միքայէլ Մինասեան պէտք է զբաղի իրեն վերագրուող քրէական գործերով, այլ ոչ թէ զբաղի 89 պատգամաւորներու իրենց աշխատանքը կատարելու հետ կապուած իր ենթադրութիւններով: Այս մասին Ազգային ժողովի մէջ լրագրողներու հետ զրոյցին, նշեց ԱԺ-ի փոխ խօսնակ՝ Ալէն Սիմոնեան, անդրադառնալով վատիկանի մօտ ՀՀ նախկին դեսպան՝ Միքայէլ Մինասեանի յայտարարութեան, թէ յաջորդ իշխանութիւններու օրօք ԱԺ-ի 89 պատգամաւորները եւ Նիկոլ Փաշինեանը պիտի դատուին սահմանադրական յեղաշրջում կատարելու համար:

«Էդ յաջորդ իշխանութիւններին դեռ շատ ժամանակ կայ: Ես կարծում եմ, որ այն հեքիաթները, երեւակայութիւնները, երազախաբութիւնը, որոնք պարոն Մինասեանը վերապրում է եւ դրանք յաճախ եթեր են բաց թողնում, իմ կողմից եւ շատ-շատերի կողմից մեկնաբանութեան կարիք այսքան յաճախ չունեն: Ես հասկանում եմ, որ պարոն Մինասեանը մամուլի դաշտում դեռ ինչ-որ ազդեցութիւն ունի, բայց ժամանակին, երբ ամբողջ մամուլ դաշտը, ամբողջ համակարգը պատկանում էր նոյն Միքայէլ Մինասեանին եւ իր աներոջը՝ Սերժ Սարգսեանին, իրենց չօգնեց: Հիմա առաւել եւս անհետաքրքիր է տարբեր ցնդաբանութիւնների հետ կապուած լուրջ մեկնաբանութիւններով հանդէս գալ: Այնուամենայնիւ, նա գտնուում է հետախուզման մէջ եւ որպէս ատելի կերպար, ես իր տեղը լինէի, կու գայի Հայաստանի իրաւապահներին կը ներկայանայի: Բայց ինքը, կարծում եմ՝ նման բան չի անի», - յայտարարեց Ալէն Սիմոնեան:

«Չի կարող նա ամբողջ կեանքում հետախուզման մէջ գտնուել: Դա վերաբերում է ոչ միայն իրեն, այլեւ մնացած բոլորին, որոնք ենթադրում եմ, այլ երկրների անձնագիր ունենալով երրորդ երկ-

ՄԻԵԴ-ը Մերժեց Սահմանադրական Դատարան Նախկին Դատաւորներու Եւ Նախագահի Դիմումը

Մարդու իրաւունքներու եւ ըրողական Դատարանը մերժած է Մասնաճարակական Դատարանի (ՄԴ) 3 նախկին դատաւորներու եւ ՄԴ-ի նախկին նախագահ՝ Հրայր Թովմասեանի պահանջը՝ միջանկեալ միջոց կիրառելու եւ իրենց դիմումները քննութեան ընթացքին Մասնաճարակութեան փոփոխութիւններու իրագործումը կասեցնելու մասին:

Յունիս 26-ին, ուժի մէջ մտած այդ փոփոխութիւններով, դադարեցան ՄԴ-ի 3 անդամներու լիազօրութիւնները, իսկ Հրայր Թովմասեանը՝ դադարեցաւ ըլլալ ՄԴ-ի նախագահ:

Եւրոպայի Դատարանը իր որոշումներն մէջ արձանագրած է, որ «Կիւլումբեանը եւ միւսները ընդդէմ Հայաստանի» գործով մի-

ջանկեալ միջոց չի կրնար կիրառուել, քանի որ միջանկեալ միջոցի 39-րդ կանոնի կիրառման ծիրէն դուրս է այն, չի պարունակեր Մարդու իրաւունքներու եւ ըրողական համաձայնագիրին մէջ ամրագրուած որեւէ առանցքային իրաւունքի լուրջ ու անդադնալի վնաս հասցնելու վտանգ:

Յիշեցնենք, որ Յունիս 26-ին ուժի մէջ մտած Մասնաճարակական փոփոխութիւններով լիազօրութիւնները դադարեցուած Մասնաճարակական Դատարանի նախագահ՝ Հրայր Թովմասեանը, անդամներ՝ Ալվինա Կիւլումբեանը, Ֆելիքս Թոխեանը եւ Հրանդ Նազարեանը, զանգատ ներկայացուցած են ՄԻԵԴ-ին, վիճարկելու իրենց լիազօրութիւններու դադարեցման օրինականութիւնը:

Չեղեալ Համարուած Է Ծառուկեանի Ընտանիքին Պատկանող «Օնիրա Քլայ» Խաղատան Արտօնագիրը

Ֆինանսներու նախարարութիւնը անվաւեր ճանչցած ԲՀԿ առաջնորդ, ընտրակաշառքի գործով մեղադրեալ՝ Գաղիկ Մառուկեանի ընտանիքին պատկանող «Օնիրա Քլայ» ընկերութեան տրուած (որպէս խաղատուն) արտօնագիրը:

Ըստ ֆինանսներու նախարարութեան, «Օնիրա Քլայ» մինչեւ 2018 թուականի Յունիսը, չէ վճարած նախարարութեան կողմէ ընկերութեան 2014-ին տրուած արտօնութեան համար այս տարուայ երրորդ եռամսեակի պետական տուրքի տարեկան գումարի 25 տոկոսը: Ըստ իրաւապահներուն, տա-

րինքը առաջ «Օնիրա Քլայ» ընկերութեան իրաւասու անձերը թաքցնելով փաստերը՝ խաբէութեամբ այնպէս ըրած են, որ օգտուին արտօնեալ պայմաններէն:

«Սրա հետեւանքով պետութիւնը զրկուել է փաստացի առանձնապէս խոշոր չափերի՝ 40 միլիարդ ՀՀ դրամի չափով ներդրում ստանալու հնարաւորութիւնից», - հարդորեց ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառուկեանը:

Ծառուկեանի փաստաբան՝ Էմին Խաչատրեան «Ազատութեան» փոխանցեց, որ այս գործով դեռեւս չեն զբաղիր, չբացառեց, որ հետագային ստանձնեն զայն:



Ազգային ժողովի փոխ խօսնակ՝ Ալէն Սիմոնեան

րում թաքնուելով խուսափելու են: Իրենք չեն խուսափելու ժամանակի հարց է», - ընդգծեց ԱԺ-ի փոխ խօսնակը:

Ինչ կը վերաբերի, որ շատեր կրցած են լքել Հայաստանի տարածքը եւ խուսափիլ պատասխանատուութենէն, Ալէն Սիմոնեան յիշեցուց, որ Հայաստանը դատական համակարգի լուրջ խնդիր ունի. «Մենք այդ մասին բազմաթիւ անգամ խօսել ենք, իսկ ԱԺ-ում գտնուող մեր ընդդիմադիր գործիչներն ասել են՝ դատական համակարգում խնդիր չկայ եւ բոլոր հնարաւոր ձեւերով մեզ փորձել են խանգարել դատական համակարգում փոփոխութիւններ անել: Ամենաազնիւ դէմքի արտայայտութեամբ, մարդկանց խաբելով քաղաքական խաղեր են խաղացել, հիմա էլ են խաղում՝ համոզելով, որ դատական համակարգում խնդիր չկայ: Հիմա դուք իրենց հարցրէք, եթէ դատական համակարգում խնդիր չկայ, ճգնաժամ չկայ, բա էք մարդիկ որոնք Հայաստանի հետ ինչ ասես արել են, բա էք ո՞նց դատարանների որոշումներով հնարաւորութիւն ստացան փախչել Հայաստանից»:

ԼՈՒՐԵՐ

Ալիեւ Կը Յոխորտայ «Մեր Յողերէն, Ոչ Իսկ Մէկ Սանթիմէթը Յող Տուած Եմք»

Ատրպէյճանի նախագահը Հայաստանը մեղադրած է «սահմանին վրայ սադրանք հրահրելու» մէջ, պնդելով, թէ հայկական զինուժը կրակ բացած է ատրպէյճանական դիրքերու ուղղութեամբ: Այս մասին իլհամ Ալիեւը յայտարարած է երկրի Անվտանգութեան խորհուրդի Յուլիս 13-ին տեղի ունեցած նիստին ընթացքին:

«Այդ հայկական կողմի հերթական սադրանքն է: Այդ անսպասելի հարուած էր մեր դիրքերուն, որ յանգեցուցած է մեր զինծառայողներու մահուան: Սակայն մենք կանխած ենք այդ յարձակումը եւ համարժէք պատասխան տուած, վրէժ լուծելով մեր զինուորներու գոհուելուն համար: Այսօր սահմանին լարուած իրավիճակը պահպանուած է», - ատրպէյճանական

լրատուամիջոցներու փոխանցումով՝ յայտարարած է Ալիեւը:

Ատրպէյճանի նախագահի պնդումով՝ տեղի ունեցածին ողջ պատասխանատուութիւնը կը կրէ Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը:

«Նման միջադէպեր տեղի կ'ունենան, այդ թուին հայաստանեան իշխանութիւններու երկերեսանիւթեան պատճառով: Ատրպէյճանը կ'ապահովէ իր տարածքային ամբողջութիւնը, երէկ եւ ոչ իսկ մէկ սանթիմէթը մեր տարածքէն տուած ենք թշնամիին: Հայաստանեան իշխանութիւններու այդ գործողութիւնները տրամաբանութեան մէջ չեն տեղաւորուիր, եւ անոնք սպառնալիք կը ներկայացնեն Հայաստանի համար», - նաեւ յայտարարած է իլհամ Ալիեւը:

Հայաստան Կը Մեղադրէ Թուրքիան Սադրիչ Կեցուածքի Եւ Միջամտութեան Մէջ

Յուլիս 12-ին, Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը հանդէս եկած է յայտարարութեամբ, որմով ոչ միայն իր երկրի անվերապահ աջակցութիւնը յայտնած է Ատրպէյճանին, փաստացիօրէն արդարացնելով Ատրպէյճանի կողմէ հայ-ատրպէյճանական սահմանին վրայ ուժի կիրառումը, այլեւ տարածած է բացայայտ սուտ եւ ապակողմնորոշիչ տեղեկատուութիւն: Այս մասին նշուած է ՀՀ ԱԳՆ տարածած հաղորդագրութեան մէջ:

Թուրքիոյ այս սադրիչ կեցուածքը եւ Հայաստանի դէմ ուղղուած անհիմն մեղադրանքները կը հաստատեն այն իրողութիւնը, որ այդ երկիրը կը գործէ ոչ թէ որպէս ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան Եւ Համագործակցութեան կազմակերպութիւն) Միասնի խումբի անդամ, այլ՝ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ ներգրաւուած կողմ: Այս իրողութիւնը

առաւել քան անհնար կը դարձնէ միջազգային՝ նախեւառաջ ԵԱՀԿ շրջանակներուն մէջ Թուրքիոյ որեւէ դերակատարում, որ կ'առնչուի դաւաբաղեան հակամարտութեան:

Թուրքիոյ ձգտումը՝ միջամտելու իր հարեւան տարածաշրջաններուն մէջ առկայ հակամարտութիւններուն, արդէն իսկ յանգեցուցած են այդ տարածաշրջաններուն մէջ անվտանգութեան խթանումը եւ անկայունութեան տարածման:

Խստօրէն կը դատապարտենք մեր տարածաշրջանին մէջ անկայունութիւն հրահրելու Թուրքիոյ փորձերը եւ կը հաստատենք, որ ՀՀ-ն պիտի շարունակէ հետևողականօրէն հանդէս գալ միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան պահպանման եւ ամբողջական դիրքերէն՝ այդ ուղղութեամբ սերտօրէն համագործակցելով իր միջազգային գործընկերներուն հետ:

Յունաստանի Մէջ Առաջարկած Եմ Արձադրութի Տունը Վերածել Պոնտոսի Յոյներու Ցեղասպանութեան Թանգարան

Պոլսոյ մէջ Սուրբ Սոփիա տաճարի շուրջ ստեղծուած իրադրութիւնը Յունաստանի եւ Թուրքիոյ երկկողմանի յարաբերութիւններու Տարց է, եւ Աթէնքը պէտք է կոշտ պատասխան տայ, որ հասկնան Անգարայի մէջ:

Այդ մասին, ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնիփրէս»-ը, յայտարարած է Յունաստանի խորհրդարանական կուսակցութիւններէն մէկու ներկայացուցիչ՝ Թանասիս Միլոնարը:

Ըստ Միլոնասին, կուսակցութեան դիրքորոշումը այն է, որ թրքական պետութեան հիմնադիր Քեմալ Աթաթուրքի տուն-թանգարանը Սալոնիքի մէջ վերածել պոնտոսցի յոյներու ցեղասպանութեան թանգարան: Թուրքիոյ նախագահ՝ Թայիփ էրտողան յայտարարած է, որ կը սպասէ Պետական խորհուրդի որոշումը Սուրբ Սոփի-

ա տաճարին կարգավիճակը փոխելու եւ գայն թանգարանէն մզկիթ դարձնելու հնարաւորութեան վերաբերեալ եւ կը վարուի այդ որոշումին համապատասխան:

Յունաստանը կը կարծէ, որ ցեղասպանութեան գոհ դարձած է աւելի քան 350 հազար պոնտոսցի յոյն: Անգարան, իր հերթին, մեղադրանքները կը համարէ «անհեթեթութիւն», իսկ Յունաստանին կը մեղադրէ քաղաքական նպատակներով «պատմական իրադարձութիւնները աղաւաղելու մէջ»: Հարցին, թէ կրնայ անիկա կանգնեցնել Թուրքիոյ նախագահը, կուսակցութեան ներկայացուցիչը պատասխանած է. «Էրտողանը անվերահսկելի քաղաքական գործիչ է»: Թանգարանի կարգավիճակը փոխելու ծրագիրները հակազդեցութիւն առաջացուցած են բազմաթիւ երկիրներու մէջ:

Փաշինեան. Ատրպէյճանի Կողմէն Որեւէ Սադրիչ Գործողութիւն Անպատասխան Պիտի Չմնայ



Վարչապետ Փաշինեան կառավարութեան միստին կը խօսի սահմանի վրայ տիրող իրավիճակի մասին

Ատրպէյճանի կողմէն որեւէ սադրիչ գործողութիւն անպատասխան չի մնար, եւ անոնց վերսկսումով Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը պիտի կրէ տարածաշրջանային ապակայունացման անկանխատեսելի հետեւանքներու ողջ պատասխանատուութիւնը, կառավարութեան Յուլիս 13-ի նիստը այսպիսի յայտարարութեամբ բացաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան, անդրադառնալով Հայաստան-Ատրպէյճան սահմանին՝ Տաւուշի մարզի Մովսէս, Չինարի գիւղերու ուղղութեամբ երէկուրէն ծաւալող ռազմական գործողութիւններուն:

«Ատրպէյճանական զինուժի սադրիչ գործողութիւնները խստագոյնս դատապարտելի են: Այսօր առաւօտեան դրանք վերսկսուել են: Դրանց վերսկսմամբ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը կրելու է տարածաշրջանային ապակայունացման անկանխատեսելի հետեւանքներու ողջ պատասխանատուութիւնը:

Խիստ մտահոգիչ է տարածաշրջանային անկայունութիւն հրահրելու Թուրքիայի գործելակերպը, որը լաւագոյնս արտացոլուած է այդ երկրի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական յայտարարութեամբ, որտեղ վերջինս անվերապահ աջակցութիւն է յայտնում Ատրպէյճանի

գործողութիւններին՝ ակնյայտ եւ արդէն աւանդական դարձած հակահայկական տրամաբանութեամբ:

Այս ռազմական միջադէպը չի առաջացել դատարկութենէն: Արդէն տեւական ժամանակ է՝ Ատրպէյճանի ղեկավարութիւնը փորձում է խաղարկել հակահայկական քարտն իրենց յայտնի դրդապատճառներից ելնելով:

Հնարաւոր է՝ գործ ունենք ներքին խնդիրները սահմանային իրավիճակի սրմամբ երկրորդ ծրագիր մղելու Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան գործելաոճի հետ, որի համաթեքսթում աչքի է զարնում ակնյայտ քամահարական վերաբերմունքը մարդկային կեանքերի, այդ թուում՝ Ատրպէյճանացի զինուորների կեանքերի նկատմամբ, որն արտայայտուում է՝ նրանց ուղարկելով անհեռանկար գործողութիւններին:

Վստահեցնում եմ, որ որեւէ սադրիչ գործողութիւն անպատասխան չի մնում: Նաեւ կոչ եմ անում մեր բոլոր հայրենակիցներին՝ իրենց անվերապահ գորակցութիւնը յայտնել մեր զինուած ուժերին՝ զինուորներին, հրամանատարներին, ովքեր այս պահին ամուր կանգնած են հայրենիքի պաշտպանութեան դիրքերում», - ըսաւ Փաշինեան:

Վարչապետը կոչ ուղղեց վստահելու բացառապէս պաշտօնական աղբիւրներուն:

ԱՄՆ-ը Կոչ Կ'ընէ Պահպանելու Հրադադարը

Միացեալ Նահանգները կը դատապարտէ բռնութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի միջազգային սահմանին վրայ, յայտարարած է Միացեալ Նահանգներու Պետական քարտուղարութեան խօսնակ՝ Մորկան Օրթակուսը:

«Մենք կողմերը կը յորդորենք անմիջապէս դադարեցնելու ուժի կիրառումը, օգտագործելու իրենց միջեւ գոյութիւն ունեցող հաղորդակցութեան ուղիղ խողովակները՝ խուսափելու համար յետագայ սրումէն, եւ խստօրէն պահպանելու հրադադարը», - ըսուած է Օրթակուսի յայտարարութեան մէջ, որ հրապարակուած է Պետական Քարտուղարութեան պաշտօնական կայքէջին մէջ:

Որպէս ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութիւն)

Միասնի խումբի համանախագահ՝ Միացեալ Նահանգները յանձնառու կը մնայ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան երկարատեւ եւ խաղաղ կարգաւորման հասնելու գործին մէջ կողմերուն օգնելուն: «Մենք պիտի շարունակենք աշխուժօրէն ներգրաւուած մնալ այդ նպատակին հասնելու ջանքերուն», - շեշտած է Օրթակուսը:

Միացեալ Նահանգներ կը միանայ ԵԱՀԿ Միասնի խումբի համանախագահներուն՝ կոչ ընելով կողմերուն հնարաւորինս արագ վերսկսելու առարկայական բանակցութիւնները եւ ընդգծելով տարածաշրջան ԵԱՀԿ դիտորդներու վերադառնալու կարեւորութիւնը, որքան արագ որ հանգամանքները գայն թոյլ կու տան, նաեւ նշած է Պետական Քարտուղարութեան խօսնակը:

Ատրպեյձան Կը Յայտնէ

Շարունակուած էջ 1-էն

Թեան վերաբերեալ յայտարարութեամբ հանդէս եկած է Արտաքին Գործոց Նախարարութեան մամլոյ խօսնակ՝ Աննա Նաղտալեան, նշելով. «Հայաստանի քաղաքացիական բնակչութեան անվտանգութեան դէմ ուղղուած այս յարձակողական գործողութիւնները ստանալու են իրենց համարժէք պատասխանը, որի ողջ պատասխանատուութիւնը կրում է ատրպեյձանական կողմը»:

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտնած է չորս գինձառայողներու զոհուելու մասին: Նախարարութեան մամլոյ քարտուղար՝ Շուշան Ստեփանեանի փոխանցումով՝ հայ-ատրպեյձանական պետական սահմանագոտիի հիւսիսարեւելեան հատուածը հակառակորդի արձակած կրակէն մահացու վիրաւորուած ստացած են գինձառայողներ աւագ գնդապետ Գարուշ Վեմիրի Համբարձումեանը, Սոս Փայլակի էլքակեանը եւ Ժամկէտային ծառայողներ՝ Սրբատ Գէորգի Գաբրիէլեանը եւ Գրիշա Վահանի Մաթեոսեանը:

Յուլիս 14-ին, Ատրպեյձանը

շուններ:

Արծրուն Յովհաննիսեան նշած էր, որ ըստ ամենայնի անոնք կիրառուած են բաւականին արդիւնաւէտ եւ այդ արդիւնքն է նաեւ Ատրպեյձանի 3-րդ բանակային ջոկատի հրամանատարներու ոչնչացումը:

Գործնականօրէն, Տաւուշի սահմանին վրայ ծաւալող իրադարձութիւնները ոչ միայն հայկական ռազմական մտքի, մարտավարութեան ու ռազմավարութեան, կամքի ու խիզախութեան, այլ նաեւ հայկական ռազմարդիւնաբերութեան հիանալի դրսեւորում են:

Զինուժի մամուլը հրապարակած է Տաւուշի մէջ Ատրպեյձանական զորքերու՝ իսրայէլական արտադրութեան «Elbit Hermes 900» ԱԹՄ-ի խոցման տեսանիւթը: ՊՆ նախկին խօսնակ՝ Արծրուն Յովհաննիսեանի խօսքով՝ «Երեւի սա Hermes 900 ի առաջին խոցումն է նաեւ աշխարհում»:

Եւրոպական Միութեան (ԵՄ) Արտաքին գործոց եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով խօսնակ՝ Փիթըր Սթանոն, հայ-ատրպեյձանական սահմանին վրայ տիրող իրավիճակի վերա-



հաղորդած է իր բարձրաստիճան գինուորականներու սպանուելու մասին: Օրուայ առաջին կէսին, Թոփուզ կայացած ձեռնարկի ժամանակ Ատրպեյձանի պաշտպանութեան փոխ նախարար՝ Քերիմ Վելիբեկը յայտնեց, որ հայկական գինուած ուժերուն հետ մարտերու ժամանակ զոհուած է Հայաստանի Տաւուշի մարզի ուղղութեամբ դիրքաւորուած Ատրպեյձանի երրորդ բանակային ջոկատի շտաբի պետ, զօրաբաժնի պետ զօրավար Փոլատ Հաչիմովը, նոյն ջոկատի հրետանիի պետ, գնդապետ Իլկար Միրզոբեկը ու եւս հինգ գինձառայողներ՝ երկու հազարապետ, երկու ենթասպայ եւ մէկ գինուոր: Այսօր Ատրպեյձանը յայտնած է նաեւ Թոփուզի շրջանի Աղտամ գիւղի խաղաղ բնակիչի զոհուելուն մասին: Ըստ հաղորդագրութեան՝ 1944 թուականի ծնունդ Ազիզ Իգաթ Ազիզովը զոհուած է հայկական կողմի հրետակոծութեան հետեւանքով: Այսպիսով, Ատրպեյձանը հաստատած է իր 12 զոհերու ու 4 վիրաւորներու մասին:

Պաշտպանութեան նախարարութեան մամլոյ նախկին խօսնակ, ներկայիս Վազգէն Սարգսեանի անուն ռազմական համալսարանի հրամանատարա շտաբային ֆակուլտետի ղեկավար՝ Արծրուն Յովհաննիսեան Տաւուշի սահմանի իրադարձութիւններու առնչութեամբ յայտնած է, որ առաջին անգամ մարտական գործողութիւններու մէջ կիրառուած են հայկական արտադրութեան հարուածային անօդա-

բերեալ հանդէս եկած է յայտարարութեամբ: Սթանոն նշած է, որ ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Ատրպեյձանը հաղորդած են սահմանին վրայ զէնքի կիրառմամբ լուրջ միջադէպերու մասին, որ, ցաւօք, յանգեցուցած է մարդկային կորուստներու:

ԵՄ-ը երկու կողմերուն կոչ ըրած է դադրեցնելու գինուած դիմակայութիւնը, ձեռնպահ մնալու լարուածութիւն հրահրող գործողութիւններէն եւ հոետորաբանութեանն եւ ձեռնարկելու անյապաղ միջոցներ հետագայ մազլցումը կանխելու համար:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը մտահոգութիւն յայտնած է հայ-ատրպեյձանական սահմանին վրայ իրավիճակի սրման կապակցութեամբ եւ հակամարտութեան կողմերուն զսպուածութեան ու հրադարարի կանոնի պահպանման կոչ ըրած է:

«Ռուսաստանի ԱԳՆ-ը լուրջ մտահոգութիւն կը յայտնէ սոյն թուականի Յուլիսի 12-ին հայ-ատրպեյձանական սահմանին վրայ իրավիճակի կտրուկ սրման կապակցութեամբ: Անթոյլատրելի կը համարենք հետագայ մազլցումը, որ կը սպառնայ տարածաշրջանի անվտանգութեան: Կոչ կ'ընենք հակամարտող կողմերուն զսպուածութիւն ցուցաբերելու եւ խստօրէն հետեւելու հրադարարի ռեժիմին», - ըստած է Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին Գործոց Նախարարութեան կայքը տեղադրուած յայտարարութեան մէջ:

Փաշինեան Ներկայացուց

Շարունակուած էջ 1-էն

բանակը, հայ ժողովրդի պատմութիւնը, բանահիւսութիւնը, էպոսը դիւցազներգութիւնը, հաւատալիքները, աւանդոյթները, առասպելները, հայոց լեզուն եւ գրերը, հայ գրականութիւնը, ներառեալ թարգմանական գրականութիւնը, գիտելիքը, գիտութիւնը, համահայկական ներուժը, հայկական սփիւռքը, հայրենիքը, ընտանիքը, անհատը, Հայ առաքելական սուրբ եկեղեցին, Հայ կաթողիկէ եկեղեցին, հայ աւե-

րաւելու, մեր երկրում որպէս օտարերկրեայ շահերի ներկայացուցիչ հանդէս գալու պատրաստակամութիւն ունեցող ուժերը պիտի արժանանան հայ ժողովրդի եւ նրա օրինական ներկայացուցիչ Հայաստանի կառավարութեան կոշտ հակադեցութեանը:

4. Հայաստանը եւ Արցախը պէտք է գերծ լինեն քորուփցիայից:

5. Իրաւունքի եւ օրէնքի գերակայութիւնը, օրէնքի առաջ բոլորի հաւասարութիւնը, իրաւունքների պաշտպանութիւնը եւ պար-



տարանական եկեղեցին, քրիստոնէութիւնը»:

Խօսելով Հայ ժողովուրդի ազգային նպատակներուն մասին՝ վարչապետը նախեւառաջ նշած է՝ «Հայկական պետութեան յաւիտենութեան համար անհրաժեշտ է գաղափարական, անվտանգային, հանրային, քաղաքական, իրաւական, տնտեսական, ժողովրդագրական, միջազգային, կրթական, մտաւորական, մշակութային՝ հաստատութեանական պայմաններու ապահովումը»:

«Արցախի ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչումն առանց որեւէ սահմանափակման, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, հետեւանքների յաղթահարումը եւ վերացումը, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների, անվտանգութեան, բարեկեցութեան, ազատութեան եւ երջանկութեան, ինչպէս նաեւ հանրահաշակ միւս իրաւունքների ապահովումը եւ պաշտպանութիւնը, օրէնքի առաջ բոլորի հաւասարութիւնը», - աւելցուց Հայաստանի կառավարութեան ղեկավարը:

Ուղերձի յաջորդ ենթավերնագիրը վարչապետը կոչեց «համակեցութեան համահայկական կանոններ»:

«1. Բռնութիւնը պէտք է բացառուի ներհայկական որեւէ հարցի լուծման գործիքակազմից: Բոլոր այն ուժերը, անհատները, որ բռնութիւնը դիտարկում են որպէս ներհայկական որեւէ հարցի լուծման միջոց, պէտք է մերժուեն»:

2. Ժողովուրդը եւ նրա ազատ կամարտայայտութիւնն իշխանութեան ձեւաւորման միակ աղբիւրն է: Ժողովրդի ազատ կամքի ազդատման, ազաւաղման ցանկացած փորձ պէտք է դիտարկուի որպէս հակապետական, հակազգային գործունէութիւն:

3. Հայաստանի եւ Արցախի, հայ ժողովրդի ինքնիշխանութիւնը բարձրագոյն արժէք է: Օտար ուժերին ներհայկական, ներհայաստանեան հարցերի լուծմանը ներգ-

տականութիւններ կատարումը պէտք է դառնայ ներազգային յարաբերութիւնների առանցք: Արտաքին կամ ներքին ազդեցութիւնների տրուող դատարանների գոյութիւնը սպառնալիք է ազգային անվտանգութեան: Դատարանները պէտք է լինեն անկախ: Տնտեսութեան, քաղաքականութեան մէջ եւ հանրային կեանքի որեւէ բնագաւառում արտօսելու խաւի, շրջանակների, անհատների առկայութիւնը պէտք է բացառուի:

6. Արցախի հարցի կարգաւորման բանակցային գործընթացի նպատակը պէտք է լինի Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ անվտանգութեան համար մղուած Արցախեան ազատամարտի արդիւնքների պաշտպանութիւնը: Բանակցութիւնների արդիւնքում Հայաստանի եւ Արցախի կառավարութիւնների համար ընդունելի համարուած որեւէ լուծում կարող է ընդունելի դիտուել միայն Հայաստանում եւ Արցախում ժողովրդական հաւանութեան դէպքում», - ըսաւ վարչապետը:

Փաշինեանի խօսքով, «Մեր ժում ենք քաղաքակրթութիւնների բախման կանխավարկածը եւ քաղաքակրթութիւնների, ժողովուրդների, պետութիւնների երկխօսութեանը պիտի դառնայ միջազգային խաղաղութեանն ու կայունութեանը աջակցելու մեր յանձնարարութեան արտայայտութիւնը, Հայաստանը պատրաստ է դառնալ նման երկխօսութեան հարթակ»:

«Ռազմավարութեան մէջ Հայաստանի պետութեան գոյութեան աղբիւրը եւ երաշխիքը համարուում է հայ ժողովրդի կամքը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը պայմանաւորուած է, պայմանաւորուած է եւ պիտի պայմանաւորուի հայ ժողովրդի կամքով, որը գոյանում է իրաւունքների եւ պարտականութիւնների իրացման խաչմերուկում», - եզրափակեց Հայաստանի վարչապետը:

Ինչպե՞ս Կը Հանգուցալուծուի «Հայ Եկեղեցու Պատմութեան» Առարկայի Թնճուկը

Լսեցի հաղորդումը երկու հայ գիտնականների հետ վերոյիշեալ նիւթի շուրջ: Ինչ գարմանք պատճառեց, որ գիտութեան ներկայացուցիչներին ոչ մէկը չի շեղեց հանրութեան, որ Մովսէս Խորենացուց սկսած մինչեւ Միքայէլ Չամչեան իրենց գրութիւնները վերնագրել են «Հայոց Պատմութիւն»: Հայ ժողովրդի պատմութիւնը՝ պատմութիւնն է նաեւ հայ եկեղեցու: Մեծահամբաւ Մաղաքիա Արք. Օրմանեան իր միջեւ այսօր չգերազանցուած աշխատութիւնը կոչում է «ազգապատում»: Հայ Ուղղափառ եկեղեցու անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը ետրակից ազգային պարագաներով պատմուած», Պէյրութ, 1959-1960. Երեք հատոր, էջ. 5532: Այն պարունակում է Ազգի պատմութիւնը սկսած Ս. Թադէոս Առաքեալից մինչեւ Տ. Մատթէոս Բ. Կոստանդնուպոլսեցի (1908-1910): «Ազգապատում»-ի շարունակութիւնը ձեռնարկեց եւ հրատարակեց Տ. Զաւէն Ա. Քհնյ Արզումանեանը՝ այն հասցնելով մինչեւ Տ. Տ. Վազգէն Ա. Պալմէան (1908-1994), 4 հատոր Նիւ Եորք 2003թ: Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւնը 1976 թ. հրատարակեց իմբ. Է. Բ. Աղախանի «Հայոց մշակութիւնը նշանաւոր գործիչները» (V-XVIII) գիրքը: Հատորի ընդգրկած մշակութիւնակաւոր ներկայացուցիչների մեծա-

մասնութիւնը վանական դէմքեր են: Տարիներ առաջ հանգուցեալ Տիրան Արք. Ներսիսեան մեզ առաջարկեց վերաշարադրել Օրմանեանի «Ազգապատում»-ը մեկուսացնելով հայ եկեղեցու պատմութիւնը ազգի պատմութիւնից: Այս երկու թեմաները այնպէս են իրար շարժախառն, որ անշատելի անհնարին էր: Մի քանի փորձեր կատարեցինք բաց չստացուեց քանի, որ տողատակ տեղադրուած ծանօթագրութիւնների ծաւալը աւելի ընդարձակ էր քան բուն Օրմանեանի շարադրանքը: Անհամեստ կը լինէր գրքի հեղինակը համարել Օրմանեանին: Միակ միջոցը նոր պատմութիւն գրելն է, ամբողջովին անտեսելով եկեղեցու պատմութիւնը, ինչպէս իրականացրեց Սովետական շրջանի պատմագիտութիւնը, այն աստիճան, որ երկուսի ուսուցումը այսօր խորթ է թուում: Եկեղեցին էլ չունի այսօր Երուանդ Տէր Մինասեան, Կարապետ Տէր Մկրտչեան, Աբրահամ Զամինեան, Պօղոս Անանեանի պէս գիտնականներ, որ կարող են այդ բացը լրացնել: Յարգանքներով՝ ԴԿ. Տ. ՆԵՐՍԷՍ ԱՒԱԳ ՔԶՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ Նախկին Բրիտանական Գրադարանի Հայկական Բաժանմունքի Տնօրէն

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Օժանդակութիւնը Կենդանութիւն Կ'ապահովէ Լիբանանի մէջ



Հակառակ օրէ օր զարգացող դժուարութիւններու եւ ծառայած մարտահրաւէրներու, Լիբանանի Հայ Աւետարանական Ընկերային Մառաշտի Գրասենեակը կը տեղեկացնէ, թէ Աւետարանական օժանդակութեան բաշխումի ծրագրի առաջին փուլը յաջողութեամբ աւարտած է: Մնունդի եւ կենցաղային այլ կարիքներու երկու մեծ բեռնատարներ ժամանած են Յունիսի 16-ին Ընկերային Մառաշտի Թրատ թաղամասի կեդրոնը: Մննդեղէնները եւ կենցաղային կարիքներու մթերքը պահեստաւորուած են Պէյրութի շրջանի Հայ Աւետարանական Եկեղեցիներու երիտասարդական խումբերու կամաւորներու կողմէ: Յաջողող երկու օրերը երիտասարդաց կամաւոր խումբին համար ամենածանր էր: Անոնք բժարանդիւր աշխատանքով եւ նուիրեալ ծառայութեամբ կրցան իրենց պարտականութիւնը աւարտել մինչեւ իրենց տրուած ժամկէտը:



Երիտասարդները լրիւ կազմակերպուած էին: Անոնք կենցաղային պաշարը փաթեթաւորեցին երկու տարբեր ծրարներու մէջ՝ գատորոշելու անդեղէնը եւ այլ կարիքները եւ տեղադրելու զանոնք յատուկ տուփերու մէջ: Անոնք բաժնեցին 200 տուփ եւ 400 տոպրակ՝ 200 կարիքաւոր ընտանիքներու, իւրաքանչիւր ընտանիքի մէկ տուփ եւ երկու տոպրակ: «Քանի մը օրուայ ընթացքին եւ առանձնաշնորհումը ունեցայ ծառայելու մեր համայնքին իմ ընկերներուս կողքին... եւ անոնց աչքերուն մէջ տեսնել երջանկութիւն, այդ ինքնին բաւարար էր երախտապարտ ըլլալու համար», ըսաւ երիտասարդ կամաւոր Յարութ Մելիքեանը: Կամաւոր երիտասարդները սնունդի եւ այլ կենցաղային կարիքներու ծրարներու մէկ մասը բաժնեցին Կեդրոնի տարածքին մէջ, իսկ մնացածը անձամբ հասցուցին նշանակուած տունները: Օգնութիւն ստացող ընտանիքներու մէջ կային անոնք, որոնք շարունակ տառապած են նիւթական դժուարութիւններէ եւ ուրիշներ՝ որոնք վերջերս կորսնցուցած են իրենց աշխատանքը եւ կամ կը ստանան իրենց աշխատավարձի միայն 25%-ը՝ ստեղծուած տնտեսական իրավիճակի կամ համաճարակի պատճառով: «Իմ զգացումս այն էր, որ ներկայ դժուարին հանգամանքները, ալ աւելի ազդեցիկ դարձուցին մեր համայնքային ծառայութիւնը ըսաւ կամաւոր ձօրճ Սահիլի: Շնորհիւ բարերարներու աջակցութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը կարողացաւ օժանդակել 200 կարիքաւոր ընտանիքներու: Օգ-

նութիւններու բաժանումէն մէկ օր ետք, Հայ Աւետարանական Ընկերային Մառաշտի Կեդրոնը արդէն հեռախօսագանգեր ստացաւ նպաստը կաշնորհելու, յայտնելով անոնց, թէ առաջին անգամն էր որ անոնք կը ստանային այսքան առատ եւ որակեալ ծրարներու նուիրատուութիւն: Երիտասարդ կամաւոր կարին Աղամեան, երախտապարտ իրեն ընծայուած ծառայութեան այս հարաւորութեան համար ըսաւ. «Շնորհակալ եմ Աստուծոյ որ ինծի հարաւորութիւնը տուաւ փոխադարձելու իմ համայնքին, եւ ծա-

Իլիամ Ալիեւ Անել Դրութեան Առջեւ

Շարունակուած էջ 1-էն

Հայ-ատրպէյճանական սահմանին տիրող իրավիճակի շուրջ շահաքրքիր պետութիւնները ու միջազգային կազմակերպութիւնները դարձեալ բարատրուեցան կողմերուս հանցարարութեան կոչ ուղղելով՝ անտեսելով Պաքուի նախադրեալ գործողութիւնները, որոնք Հայկական կողմին պարտադրած էին դուրս գալ պաշտպանական իրենց դիրքերէն ու սաստելու հակառակորդին:

Սահմանային այս վերջին բախումները կու գան վերահաստատելու որ, եւ բանակցային սեղանին եւ ռազմաճակատի վրայ, Հայկական դիրքերը աւելի ու աւելի կ'ամրապնդուին ու հակառակը

պնդողները կ'ապրին տարբեր մոլորակի վրայ:

Վերջին ամիսներուն կատարուած լայնածաւալ զինավարժութիւնները անգամ օգնութեան հասնիլ Ատրպէյճանի պատերազմական մեքենային: Այս բոլոր իրողութեանց առջեւ Իլիամ Ալիեւին կը մնայ հաշտուիլ գետնի վրայ տիրող ներկայ իրողութեան հետ ու իր ուշադրութիւնը կեդրոնացնել ներքին հարցերը լուծելու վրայ, ուր իրեն կը սպասեն տնտեսական խոր տագնապներ, ներքին պառակտումներ եւ դժգոհ գանգուածներ ու դադրի պատերազմի միջոցաւ հարցեր լուծելու իր նկրտումներէն, որոնք աւելի անելի վիճակի կրնան մատնել զինք ու երեքացող իր վարչակարգը:

«ՍԱՍԻՍ»

Մայր Աթոռը Կը Դատապարտէ

Շարունակուած էջ 1-էն

Գուպայի մեծագոյն դժուարութիւնն է տնտեսական շրջափակումը ԱՄՆ-ի կողմէ, որ կը շարունակուի հակառակ Օպամայի օրով պաշտօնապէս վերահաստատուած դիւանագիտական յարաբերութիւններուն: Վառելանիւթի տազնապն ալ մեծ համեմատութիւններու հասած է: Ներկայիս Գուպան քարիւղատար նաւեր ապսպրած է, ձերբնագատուելու համար օտար եւ շահամոլ ընկերութիւններէն:

Գուպացիները առ հասարակ հայերու մասին գաղափար չունին: Սակայն կ'իմանանք թէ Ա. Համաշխարհային պատերազմէն ետք Արեւմտեան Հայաստանէն եւ Պոլսէն հայեր հաստատուած են Գուպա: 1940-ական թուականներուն Հավանայի մէջ կ'ապրէին շուրջ 500 հայեր: Անոնք աջակցած եւ հանգանակութիւն կատարած «Սասունցի Դաւիթ» հրասայլներու օգտին, սատարելու համար հակաֆաշիստական ընդհանուր պայքարին: Ոնեցած են գաղութային միութիւն, դպրոց եւ հայրենակցական միութիւններ:



աւելի քան 100 գեղանի պարողներու եւ պարուհիներու: Արդարեւ գեղարուեստական գունագեղ ներկայացում մը, որ իր որակով կրնայ մրցիլ աշխարհի առաջին կարգի

իր ներկայ գործընթացով եւ շրջափակումի վերացումով Գուպան կրնայ վերածուիլ միջազգային ընտանիքի յառաջընթաց եւ մրցունակ երկրի մը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

ՆՈՒՆԻԿ ՏԵՐ ՂԵՆՈՆՂԵԱՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻՆ

Գեղարտ տեղով՝ մեծ պատգամին պիտեան Ներսիս փառքը դարձնեցիր դու, ո՛վ Աշուն, Չարչարանցի գողգողային անվեհեր, Ազատ երթին կարողացիր գոռ հրաւր:

Կորովիդ մեջ առաջինի, անյարիր, Եռանդագին վեհ Գուպարը սիրեցիր, Ազատութեան վեհ գործը խաչուեցուն, Նուիրեցիր կեանքը մաքուր ու բողուն:

Չոյգ պայտերդ շղթաներու ազուցուած, Իղծերուդ փուլը կապոցին յար գուզնթաց, Նիզակաւոր սուրբ դրօշիդ յատկանիշ, Ասպետական կամքիդ դարձաւ խորհրդանիշ:

Նկուն չեղար ոչ մեկ ազգին պայքարի, Ընդդիմի մեջ միշտ դուրս եկար քաջարի, Ամեն կողմ երկայթ ծողեր փակած պինդ, Նուիրական կը պատկերեն ինչո՞ւ պինդ:



ԱՒԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Սոյն գործերի բանաստեղծութիւնը գրգիռ հանդիսացաւ հետեւելու անոր հեղինակին՝ Նունիկ Տէր Ղեւոնդեանի կեանքի հետքերուն:

Մնած է Ռոտոսթօ: Սոյն քաղաքը կը գտնուի Մարմարա ծովուն հիւսիսարեւմտեան եզերքը՝ Կ. Պոլիսէն 72 մղոն դէպի արեւմուտք, իսկ Տարտանէլի նեղուցին ներքին բերանէն շուրջ 60 մղոն դէպի հիւսիսարեւելք: Քաղաքը թրքական տարբերակով կը կոչուի Թեքիրտաղ: 1600-ականներէն սկսեալ, հայեր կը սկսին հաստատուիլ հոն՝ գաղթելով Արեւմտեան Հայաստանի տարբեր քաղաքներէ (Կամախ, Երզնկա, Ակն, Կեսարիա, Տիվրիկ, Կարին եւ այլն), որպէս հետեւանք իրենց անտանելի պայմաններուն: Ռոտոսթոյի բնակիչները եղած են յոյներ, թուրքեր եւ հայեր:

Քաղաքին հայերը, հոծաթիւ կերպով, գլխաւորաբար կը բնակէին երկու թաղամասերու մէջ, որոնք կը կոչուէին իրենց եկեղեցիներուն անուններով՝ Ս. Թագաւոր եւ Ս. Խաչ: Թագաւոր թաղին երբեմնի առաջնորդական փոխանորդը եղած է Տէր Ղեւոնդ ՔՏՆՅ. Պեգիբճեան, որուն տան երգիքին տակ կը ծնի Նունիկ, 1885 թուականին: Ան հետագային կը կրէ իր հօր եկեղեցական անունը՝ որպէս մականուն, ինչպէս որ աւանդութիւն եղած է հայոց մէջ՝ քահանաներու շառաւիղներու պարագային: Ան կ'ուսանի իր թաղին Յովհաննէան վարժարանին մէջ, որուն տնօրէնութիւնը այդ տարիներուն կը վարէր Լեւոն Շանթ: Ապա՝ կը յաճախէ Կէլիպուլեանի ֆրանսերէնի վարժարանը:

1908-ի Օսմանեան Սահմանադրութեան օրերուն կը մեկնի Կ. Պոլիս, ուր իբրեւ ուսուցչուհի կը պաշտօնավարէ Կէտիկ Փաշայի հայկական դպրոցին մէջ: Մի քանի տարի անց կը վերադառնայ իր ծննդավայրը եւ կը պաշտօնավարէ Յովհաննէան վարժարանէն ներս:

Ռոտոսթոյի, չետագային Ֆրանսա բնակած եւ ստեղծագործած անուանի գրող ու արձակագիր Վազգէն Շուշանեան իր յուշագրական «Ալեկոծ Տարիներ» հետաքրքրական հատորին մէջ կը վկայէ. «Բոլորին պէս է՛ս եւս ծագրած եմ Պոլսէն եկած մեր ուսուցիչները եւ զանազան անհաճոյ խաղեր սարքած անոնց գլխուն: Այս արհամարհանքը երբեմն անողոք հալածանքի կը փոխուէր, եթէ կին ըլլար պոլսավարի խօսողը: Կը յիշեմ, որ մեր դասարանի տղաքը բաւական կը նեղէին ֆրանսերէնի ուսուցչուհին՝ Օր. Նունիկ Տէր Ղեւոնդեանը, որ ո՛չ միայն մաքուր, այլեւ ճանաչարհիկ բառերով խօսելու գէշ



սովորութիւնը ունէր, - հէք աղջիկը: Այս ոտնձգութիւնը չէինք ներքեր իրեն, որովհետեւ Ռոտոսթոյի էր ու հետեւաբար տեսակ մը դաւաճանութիւն էր ըրածը: Նայեցէ՛ք անգամ մը սա երիտասարդ օրիորդին, որ կը յանդգնէր իսնդարել աւանդութիւնն ու կարգը: Օրիորդ Նունիկ՝ բաւական չարչարուած Յուսաբերի Չղային խմբագրին ձեռքէն, որ գինքը Հնչակեան սոխակ կ'անուանէր, նուրբ, թուի ու փափուկ աղջիկ մըն էր այն ատեն: Ու հաւանաբար չէր հասկնար մեր անառակ ու խօլ գուարճութեան պատճառը: Ինչ խայտաճամուկ, չնաչխարհիկ, ինչ անմրցելիօրէն գուարճալի բառեր կը նետէր մեր թեքիրտաղցի բերտ գլուխներուն: Ս. Խաչ թաղէն դասընկեր մը ունէի, որ զայն Գրաբար մատմազէլ մկրտած էր:

Գրաբար մատմազէլ կամ ոչ,

յամենայն դէպս ծածուկ հիացում մը կը պատճառէր ինձ մեր Ս. Դեմոկրատ Հնչակեան Օր. Նունիկը: Ու կարծեմ հայ լեզուին հանդէպ սնուցած սիրոյս առաջին ծիրերը մասամբ կը պարտիմ նաեւ իրեն»: («Ալեկոծ Տարիներ», Օշական մատենաշար, Մոնթրէալ, Փանատա, 2014, էջ 75-76): 1890-ականներէն, Ռոտոսթոյի մէջ կային քանի մը անհատ հնչակեաններ, որոնք անդամ էին Կէտիկ Փաշայի եւ Գուր Գաբուրի Հնչակեան մասնաճիւղերուն: Աւելի ուշ, հետզհետէ անդամները կը բազմանան եւ 1908-ի Սահմանադրութենէն ետք կը կազմուի Ս. Խաչ թաղի Հնչակեան «Մուրատ» մասնաճիւղը, որ ունէր «Պոյաճեան» (Մուրատ) անունով ակումբը: Կուսակցութիւնը հոն կը գործէ մինչեւ 1915 Մեծ Եղեռնը, որու ընթացքին անոր անդամներէն շատեր կը նահատակուին կամ կ'աքսորուին:

Նշենք, որ Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսին ծնողները (Աբրահամ եւ Սիրանոյշ Պալճեաններ) Ռոտոսթոյի էին: Անոր մայրը իբրեւ ուսուցչուհի պաշտօնավարած է Ռոտոսթոյի այն վարժարանին մէջ, ուր կը դասաւանդէր Նունիկ Տէր Ղեւոնդեան:

Ռոտոսթոյի հայութեան պատմութիւնն ու հայ անուանի դէմքերու մասին գրած է Ռոտոսթոյի եւ ապա Պուլկարիա հաստատուած Սարգիս Փաշաճեան («Յուշամատեան Ռոտոսթոյի Հայերուն 1606-1922», 1971, Պէյրութ, 266 էջ. տպարան՝ Տօնիկեան): Իսկ քաղաքին մասին գեղարուեստական վաւերագրական վէպ գրած է պուլկարահայ գրագիրուհի, դիւանագետ, հասարակական գործիչ Սեւտա Սեւան:

1922-ին քաղաքը կ'իյնայ քեւմալականներուն ձեռքը. տեղի յոյն եւ հայ բնակչութիւնը զանգուածաբար կը գաղթէ: Ռոտոսթոյի հայեր մեծաւ մասամբ կը հաստատուին Պուլկարիա եւ Ռումանիա: Նունիկ Տէր Ղեւոնդեան կը մեկնի Ռումանիա, ուր Պուլքէշի հայոց վարժարանին մէջ կը պաշտօնավարէ իբրեւ ուսուցչուհի մինչեւ 1927 թուական:

Ան 1928-ին կ'անցնի Ֆրանսա, Մարսէյի շրջան: Ֆրանսահայ բազմաբեղուն եւ հմուտ պատմաբան Լեւոն Չորմիսեան, անդրադառնալով Մարսէյի արուարձան Սէնթ Անթուանի շրջանի հայ գաղութին կազմաւորման, կը գրէ. «Եկեղեց-

ւոյ յարակից սրահ մըն ալ կը շինուի իբրեւ դպրոց, որ ունեցած է 110 աշակերտներ:

Երկար տարիներ այդ դպրոցին ուսուցչուհիներէն է Օր. Նունիկ Տէր Ղեւոնդեան, պատրաստելով հայեցի դաստիարակութեամբ օժտուած սերունդ մը»: Ապա՝ «Սէնթ Անթուանի մէջ եւս կուսակցական մասնաճիւղեր կան: Հնչակեանները գորաւոր կազմ ունեցած են, բաղդատմամբ տարբեր շրջաններու» (Լեւոն Չորմիսեան, «Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Դ. Հատոր, Հայ Սփիւռքը, Ա. Գիրք, Ֆրանսահայերու Պատմութիւնը», 1975, Պէյրութ, էջ 323. տպարան՝ Տօնիկեան):

Մինչ Մարսէյի մէջ կը շարունակէր ուսուցչական ասպարէզը՝ հայերէնի եւ ֆրանսերէնի դասաւանդումով, ան կը մնար հաւատաւոր կուսակցական եւ կը գրէր բանաստեղծութիւններ: 1934 Օգոստոսին, Մարսէյի մէջ տեղի կ'ունենայ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան 9-րդ համագումարը: Արժանաւոր բանաստեղծուհին սոյն համագումարին կը մասնակցի որպէս Ռումանիոյ շրջանի պատգամաւոր, ունենալով երկու ձայնի իրաւունք: Ռումանահայ ընկերներ իրենց վստահութիւնը յայտնած էին անոր: Ան աշխուժօրէն կը ներգրաւուի համագումարի աշխատանքներուն: (Խմբագիր Արսէն Կիտուր, Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Բ. հատոր, 1963, Պէյրութ, էջ 328-330. տպարան՝ Շիրակ):

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած «Արարատ» բացառիկին մէջ, «Մեր Անկրկնելի Հերոսուհիները» խորագրեալ յօդուածին մէջ, ընկերուհի Ազնիւ Կիտուրեան Նունիկ Տէր Ղեւոնդեանի անունը կը թուէ Մարօ Նազարբէկեանի, Շուշանիկ Կուրդիանեանի, Հերոսուհի Շաքիի, Բիրուզ Սապահ-Գիւլեանի, Մառի Պէյլերեանի եւ բազմաթիւ ուրիշներու քովն ի վեր («Արարատ» բացառիկ, 1987, էջ 39):

Յարգանք նուիրեալ հնչակեան, անձնդիր ուսուցչուհի, շնորհալի բանաստեղծուհի Նունիկ Տէր Ղեւոնդեանի յիշատակին, որուն «Հնչակեան Զինանշանին» բանաստեղծութիւնը խօսուն վկան է իր հայրենասիրական ոգիին:

«ԱՐԱՐԱՏ»

Pasadena Unified School District
Armenian Dual Language Immersion
High School Program. (DLIP)
 The program will be located at Blair School, home to PSD's International Baccalaureate programs.

Register Now!

2020-2021 Registration for the Armenian Dual Language Immersion High School Program at Blair is now open!

Armenian Dual Language Immersion Program

PASADENA UNIFIED SCHOOL DISTRICT
Our Children. Learning Today. Leading Tomorrow.

626-396-3606
openenrollment.info

Հայաստանցի Սփիւռքահայը եւ Նաիրա Զոհրապետանի «Լափ»ը

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Այս որքա՞ն թուք ու մուր, հայհոյանքների տարափ տեղաց քո (Հոգնակիրով չեմ դիմելու, դուք դրան չ'արժէք...,- (ՀԵՆ. Ա.) գլխին ու դեռ շարունակում է տեղալ աւելի անգնացած, շատ անգամ բարոյական չափորոշներից դուրս արտայայտութիւններով, եւ դեռ շատերը նոր են հասկանում թէ ինչպիսի՞ թոյն էս թափել Հայաստանից արտագաղթած քո հայրենակիցների հասցէին՝ նրանց անուանելով «Լափամանից մի կտոր լափ ուտողներ»:

Եւ, ինդիրն այն է, որ դու այդ նողկալի արտայայտութիւնն արել ես ոչ թէ բանաւոր, ասենք ինչ որ վայրկեանի ազդեցութեան տակ, այլ գրաւոր ընթերցման ժամանակ, այն էլ՝ Ազգային ժողովի հերթական նիստի ընթացքին: Կը նշանակի այդ մտածումը քո ուղեղում ամրագրուած համոզմունք է: Դա փաստում է նաեւ այն հանգամանքով, որ, երբ քեզ մտերմաբար դիտողութիւն են արել այդ տմարդի արտայայտութեան համար, դու կրկին անգամ, առանց մտածելու հետեւանքների մասին, պատասխանել ես՝ «Լաւ եմ արե...»:

Այսպէս չի լինում աղջիկս, ո՛ւմ վրայ ես թափում քո մաղձը, ինչի՞ց դրդուած, 8-9 միլիոնանոց հաւաքականութեան վրա՞յ... չէ՞ որ նրա գոյութեամբ եւ գորութեամբ է պայմանաւորուած Հայաստանի գոյութիւնը, ներկան եւ ապագան:

Ժամանակին, Լեւոն Տէր Պետրոսեան մեզ «Նարինջ ուտողներ» անուանեց, որը այս երեսուն տարուայ ընթացքին մի կերպ մոռացուեց, անցաւ գնաց: Վստահ եմ՝ ինքը գղջացած կը լինի իր այդ արտայայտութեան համար: Իսկ քո արարքը չի մոռացուի:

Կարելոյը՝ անուն թողնելն է, սա ի՞նչ կապէս գիտութեան, մշակույթի իւրաքանչիւր գործչի միանգամայն ընդունելի երազանքն է: Դու՛ Նաիրա, քո «Լափ»ով՝ մտար պատմութեան մէջ ու կերտեցիր քո անունը, եւ այնքան արագ, որ նորնոր ենք ուշքի գալիս, միմեանց ասելով, թէ սա ի՞նչ փոթորիկ էր: Հիմա կարող ես հանգիստ քնել, մինչ այդ չմոռանաս զեղեցիկութեան սրահում դէմքդ լողզել մոռեցնելին յատուկ քսուկ-մսուկներով, մանաւանդ որ առջեւում ջրի ճամբայ դարձրած Ստրասբուրգն է, որի քաղաքապետն այս օրերին չափրած դ սփիւռքահայ 30-ամեայ ժամանա Բարսեղեանն է, իսկ որ Փարիզ գնաս, հեռու չէ, քաղաքի ամենաշարժուն՝ 15-րդ վարչական շրջանի ղեկավարն է, դարձեալ հայուհի Անուշ Թորանեանը:

Բա՛... Սա՛ է սփիւռքահայը, Սփիւռքի երիտասարդ սերունդը:

Այ տնաչեն, մեր՝ Լոս Անջելէսի հարիւրաւոր Բոմբերն (անտուն, անտեր) անգամ անօթի չեն: Անօթի, սոված մարդ չկա՞յ մեզ մօտ: Ամօթ է նոյնիսկ ուտելիքի մասին խօսելը: Այդ Հայաստանում է, որ ուտելիքը մարդու համար առաջին մտահոգութեան առարկան է: Եւ այդ առարկան, այո՛, ձեռք բերելու համար է, որ նա, անկախութեան առաջին օրերից սկսեալ, 30 տարի շարունակ, անգորութիւնից, անտրոշութիւնից ու անգործութիւնից դրդուած ձգտում է փախչել, հեռանալ իր ծննդավայր-

րից:

Մինչ Հայաստանի անկախանալը, 70-80-ական թ. թ., տեղի ունեցած արտագաղթը բնաւ նման չէ անկախութեան տարիների արտագաղթին: Նախկին արտագաղթածները բնաւ էլ Նաիրայի ասած «Լափ»ի համար չէ որ թողել են Հայրենիքը, այլ՝ գաղափարի, կոմունիստական կարգերի, անագատութեան եւ վիրաւորուած արժանապատուութեան համար են թողել Սովետական Հայաստանը:

Եւ նրանք, բոլորն էլ տնտեսապէս ապահովուած են եղել, ինչպէս եւ մեր ընտանիքը, որն ունեցել է բարուք ապրելակերպ, հիանալի բնակարան, ավտոմեքենայ, եւ շրջել բազմաթիւ երկրներ, նոյնիսկ՝ Թուրքիա:

Այդ արտագաղթողների գգալի մասը եղել են մտաւոր աշխարհի ներկայացուցիչներ (գիտնականներ, բժիշկներ, արուեստագէտներ, ինժեներներ, դասախօսներ), որոնք, համառ աշխատանքով, այս ծովածաւալ երկրում գտել են իրենց տեղը եւ 30 տարուց աւելի՝ սպասարկում են ոչ միայն իրենց հայրենակիցներին, այլեւ օտարների: Ես իմ տանը երկու տարի պահել եմ «հայրենափախ» մի երտասարդ ինժեների, որը ներկայիս, իր կիսատ-պուստ անգլերէնով ղեկավարում է մի հսկայական օդանավաշինական գործարանի բաժիններից մէկի գլխավոր ինժեների պաշտօնը՝ մեզ համար առասպելական թուացող աշխատավարձով:

Այնպէս որ, Նաիրա Զոհրապետան, գրոյշ վարուելի Սփիւռքի հետ: Դու չգիտես, չես ճանաչում Սփիւռքահային, որն աւելի հայ է, քան դու, մէկ էլ ձեր համագործակից Գեւորիկը (Գեւորգ Պետրոսեան):

Գուցէեւ կը լինեն մարդիկ, որոնք կ'ասեն թէ վայել է Մաստրոյին, որ նման որակումներով է արժեւորում պետական, քաղաքական գործչին, այո՛, վայել է, որովհետեւ նա վարկաբեկել, ստորացրել է ողջ Սփիւռքին, որն ապրում, շնչում է Մայր Հայաստանով:

Քո ներողութիւն խնդրելը արժէք չունի: Դու գիտես ինչի է նման քո վարմունքը: Ասեմ, մի առած կայ. Երբ կոտորուած յախճապակէ սափորը սոսնձուում եւ նախնական տեսք է ատանում, միեւնունն է՝ փակցուած տեղերը հաւիտեան մնում են:

Ինչպէս երեւում է դու բաւական հեռու ես իրականութիւնից: «Լափ» հասկացութիւնը վաղուց է դուրս եկել մեր բառապաշարից Տիկին Նաիրա: Աշխարհի բոլոր առաջատար երկրներում, այսօր արդէն Հայաստանում էլ, շներն ունեն յատկապէս իրենց համար պատրաստուած ուտելիքներ եւ ապրում են մարդկանց նման: Ունեն իրենց ճաշացանկը, իրենց բժիշկը, հիւանդանոցը եւ՝ գերեզմանոցը: Աւելի լաւ չէր լինի, որ դու՛որպէս լրագրող, մի ուրիշ բառ գտնէիր սփիւռքահային վարկաբեկելու համար, ասենք՝ ՀԱՅՐԵՆԱՓՈՒՆ, կամ էլ՝ ՄՈՒՐԱՅՅԱՆ : Չէ՛, ո՛չ, մեզ մօտ՝ Լոս Անջելէսում ոչ հայրենափախ կայ եւ ոչ էլ մուրացկան: Հայաստանից՝ այո՛, կան ժողովրդին 20-30 տարի թալանած հայրենափախ միլիարդատէրեր, որոնք,

Քաղցրիկ Պուրճ-Համնուտ (6)

ԱՐՄԵՆԱԿ ԵՂՈՅԵԱՆ

Հայրենադարձը բաւական բան փոխեց մեր կեանքին մէջ:

Առաջին կարաւանով, ինչպէս ըսի, մեկնեցաւ մօրաքոյրս իր երկու գաւակներով, երկրորդով մեկնեցաւ հօրաքոյրս ալ իր չորս գաւակներով, իսկ հօրս բոլոր ճիւղերը, որ մենք եւս հայրենադարձուէինք, մնացին ապարդիւն՝ համակելով մեզ գրկանքի այն խոր զգացումով, որ յատուկ էր բոլոր մնացողներուն: Ոչ մէկ հրաւէր ստացած էինք՝ ո՛չ կարմիր, ո՛չ դեղին, իսկ վերջին նաւը մէկ օրէն միւսը մեկնելիք էր, ինչպէս ափսոսանքով կը գեկուցէր հայրս:

Ահա այդ օրերէն մէկուն էր, որ երեկոյեան եղբայրս տուն չվերադարձաւ:

Հօրս տագնապալի պրպտումներն ու հարցուփորձերը ի վերջոյ պարզեցին, որ ան գաղտագողի նաւ բարձրացած էր ու խառնուած հայրենիք վերադարձողներուն: Եւ ինք առաջինը չէր, որ կ'ընէր այս բանը, իրմէ առաջ ուրիշներ ալ դիմած էին հայրենադարձի այդ միջոցին, եւ այդ նոյն օրը նմանապէս կային դիմողներ, որոնցմէ մէկն ալ ինք էր:

Եղբօրս փախուստը եղաւ մեր ընտանեկան մեծագոյն ողբերգութիւնը, որ տարի մը ետք աւելի շեշտուեցաւ, երբ կանգ առաւ հայրենադարձը, եւ ուրեմն ընդմիջտ կորսուեցաւ միանալու ամէն յոյս: Ծնողքս վաղաժամ մեռան առանց տեսնելու իրենց գաւակը:

Այդ առաջին տարին հայրենադարձուեցաւ Աբգարեանի տնօրէնն ալ:

Յուշերուս մէջ ան կը ներկայանայ իր գեղեցիկ կերպարով, որ կը շեշտուէր կրած փողկապով, անթերի արդուկուած զգեստով, որով զգալապէս կը զանազանուէր շրջապատէն, այլեւ ազնուական նիստուկացովը:

Յուշադրամի դիմերեսն է այս, սակայն կայ անոր դարձերեսը եւս: Շատ խոր հետք ձգած է մէջս անոր՝ ծեծելու սովորութիւնը:

Ան գրպանին մէջ գրեթէ միշտ կը կրէր անուանացանկ մը, որ հայթայթած կ'ըլլար այս կամ այն ուսուցիչը եւ որուն մէջ արձանագրուած կ'ըլլային անունները՝ մինչեւ հիմա ալ չեմ գիտէր ինչ յանցանքով ամբաստանուած աշակերտներու: Այդ ցանկը երեւան կ'ըլլէր առաւօտեան գբօսանքի աւարտին, բակին մէջ շարուելու առթիւ, կամ շաբաթ օրերը կէսօրուան ատենամարզանքին, որ կը սկսէր...ծեծով: Ապտակներն ու կիցերը անխնայ կ'ջնէին «յանցաւորներու» դէմքին ու մարմնի որեւէ մէկ մասին: Ոմանք գետին կը տապալէին, սակայն ան կը շարունակէր հարուածել:

Կը պատահէր, որ ցանկին մէջ գտնուէր անունը իր սեփական գաւակին եւս, որ Արա կը կոչուէր. սա իր կարգին կը կրէր նոյն պատիժը՝ առանց նուազագոյն գատողութեան, ընդհուպ գետինները տապալելով ու ենթարկուելով հօրը յաջորդական կիցերուն: Շատ կը զարմանայի, թէ մարդ ինչպէ՛ս կը ծեծէ իր գաւակը:

Տնօրէնին կը հետեւէին գրեթէ բոլոր ուսուցիչները եւ ուսուցչուհիներն ալ:

Ինչպէս նախակրթարանի, այնպէս ալ մանկապարտէզի մէջ:

Այս աւանդույթը մագաչափ փոխուեցաւ անոր Հայաստան մեկնումովը եւ փոխարինումովը Արմէն Ղարիպով՝ 1946-51 տարիներուն, ուր ապտակներն ու կիցերը փոխարինուեցան...ամրակուռ գաւազաններով:

* * *

Ես միշտ հեզնական քմծիծաղով կարդացած եմ Ռաֆֆիի «Տէր Թողիկ»-ը: Այո՛, քմծիծաղով, որովհետեւ Տէր Թողիկը, փոքրիկներու ներբաններուն տուած հարուածներովը, շատ հեռու կը մնար, օրինակ՝ իմ մէկ ուսուցիչէս, որ կը կոչուէր Յակոբ Կարայակոբեան, որուն ձեռքէն անպակաս էր գաւազանը՝ իբրեւ հինգերորդ անդամ, եւ որ յատուկ ապսպրուած կ'ըլլար դասընկերներէս Յովհաննէս Թադէոսեանի ատաղձագործ հօրը. ան պէտք է ունենար 80սմ հասակ, 7սմ լայնք եւ 12սմ հաստութիւն, եւ կը ծառայէր թուաբանութեան դասի բացատրութեան՝ գրատախտակին վրայ, եւ...մեր դատարարակութեան:

Պատկերացուցէք իստաշունչ ձմեռ առաւօտներուն թերի սնած ու թերի հագուած մանուկներ ու պատանիներ, որոնք իրենց օրը կը սկսէին այդ գաւազանի հարուածներով՝ լաւագոյն պարագային երկու, ընդհանրապէս չորս, երբեմն ալ վեց: Ան ճիւղալային թափով ու անողբութեամբ կ'իջնէր առանց ատոր ալ կապուտցած ու դողացող ափերուդ, իսկ երբեմն ալ հակառակ կողմը՝ մատերուդ: Իսկ թէ ճիշդ ի՞նչ յանցանքի բերումով, չեմ յիշեր եւ այսօր, աւելի քան կէս դար անց, մագ-մօրուք ճերմկցնելէ ետք ալ, չեմ կրնար պատկերացնել, թէ վերջին հաշուով ինչ կրնային ըլլալ այդ «յանցանք» կոչուածները:

Գաւազանն ու ծեծը սովորական էին օրուան մանկավարժական բարքերուն եւ հանրօրէն ընդունելի թէ՛ աշակերտներու եւ թէ՛ մեր ծնողներուն համար: Մեր պարագան ըմբռնելի է, սակայն չեմ յիշեր նաեւ որեւէ ծնող որ օր մ'օրանց նախաձեռնէր փա առնել դպրոցի դուռը եւ բողբէր գաւակին կերած ծեծին համար, որքան ալ դաժան ըլլար այդ ծեծը: Այնպէս որ դպրոցը աւարտելէս ետք գրեթէ այլեւս չէի մտածեր անցեալի «գաւազանակիր»-ներու մասին, իսկ եթէ այս կամ այն առիթով պէտք ըլլար անդրադառնալ անոնցմէ մէկուն կամ միւսին, կը յաջողէի առանց դառնութեան, գրեթէ անտարբերութեամբ յիշել անոնց կերպարը, ինչպէս հիմա կը յիշեմ, անոնք կոչուէին Արմէն Ղարիպ, Յովհաննէս Թապաքեան, Տիգրան Տիգրանեան, Ռեբեկա Պայրամեան, Ազատուհի Մանանեան եւ ուրիշներ ալ:

Նոյնը չեմ կրնար ըսել, սակայն, Յակոբ Կարայակոբեանին համար:

Ան թուաբանութեան լաւ ուսուցիչ էր, սակայն այս բարեմասնութիւնը չէր յաջողեր մոռացութեան մատնել իր դաժանութիւնը, որպէսզի անտարբեր ձեռքով դարձնէի յուշերուս հէջը, երբ գիտակցութեանս պատասխան վրայ յայտնուէր անոր մտապատկերը: Գերիշխողը միշտ միւսին էր, այն, որ կը գուգորդուէր գաւազանի բարձրացումին մինչեւ գլուխը, ապա աւելի վեր ու աւելի ետեւ, ընդհուպ

Վահան Տերեան (Ծննդեան 135րդ Ամեակ)

«Մնուել է Ախալքալաքի. (այժմ Զաւախք) Գանձա գիւղում՝ հոգեւորականի ընտանիքում: Նախնիները 1830 թուականին Զաւախքում վերաբնակութիւն էին հաստատել Կարինի Կարճնկոց գիւղից: Տոհմագրութիւնը սկսուած է տեր Զաւախքից, ում թոռը՝ Սուքիասը, ապագայ բանաստեղծի հայրն էր:

1897 թուականին Տէրեանը մեկնում է Թիֆլիս ուր սովորում էին այդ ժամանակ իր ավագ եղբայրները: Եղբայրների մօտ ապագայ բանաստեղծը սովորում է ռուսերէն ու պատրաստում ընդունուելու Մոսկուայի Լազարեան ճեմարան: 1899 թուականին Տէրեանը ընդունուում է Լազարեան ճեմարան: 1906-ին Աւարտում է Լազարեան ճեմարանը եւ այնուհետեւ ընդունուում Մոսկուայի պետական համալսարան, որից կարճ ժամանակ չետոյ ձերբակալուած է լեղափոխական գործունէութեան համար ու նետուում Մոսկուայի Բուտիրկա բանտը:

1908 թուականին Թիֆլիսում լոյս է տեսնում Տէրեանի ստեղծագործութիւնների «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն որը շատ ջերմ է ընդունուում՝ թէ՛ ընթերցողների եւ թէ՛ քննադատների կողմից: Թուականին 1915-ին «Մշակ» թերթում հրատարակուած է բանաստեղծի հայրենասիրական բանաստեղծութիւնների «Երկիր Նայիրի» շարքը:

1915-16 թուականներին Տէրեանը մասնակցում է Վալերի Բրիւսովի եւ Մաքսիմ Գորկու կազմած ու խմբագրած «Հայաստանի պոէզիան» եւ «Հայ գրականութեան ժողովածու» գրքերի ստեղծման աշխատանքներին: Հայերէնից ռուսերէն է թարգմանում Գաբրիէլ Սունդուկեանի «Պեպօ»-ն, Բաֆֆու «Կայծեր»-ի առաջին հատորը, Շիրվանզադէի «Չար ոգի»-ն:

Նոյն թուականին երեւում են Վահանի կրթումը բուն դրած թոքախտի նշանները: Գալիս է Կովկաս բժշկուելու, բայց փետրուարեան յեղափոխութիւնը դրդում է նրան թողնել բժշկուելը եւ գնալ Պետերբուրգ: Խորհրդային իշխանութեան հաստատման առաջին իսկ օրերից դառնում է նրա մօտիկ աշխատակիցը:

1919 թուականի Հոկտեմբերին Տէրեանը ակտիւօրէն մասնակցում է բոլշեւիկեան յեղափոխութեանը եւ այն յաջողած քաղաքացիական պատերազմին: Լենինի ստորագրութեամբ մանդատով մասնակցում է Բրեստի խաղաղ պայմանագրի ստորագրմանը: 1920 թուականին Տէրեանը՝ լինելով Համառուսական Կենտրոնական Գործկոմի անդամ, առաջադրանք է ստանում մեկնել Թուրքեստան այժմեան միջինասիական հանրապետութիւններ, սակայն ծանր հիւանդութեան պատճառով ստիպուած է լինում մնալ Օրենբուրգում, ուր եւ վախճանուած է 1920 թուականի Յունուարի 7-ին, ընդամէնը 35 տարեկան հասակում:


«Վիքիբեռիա Ազատ Համայնագիտարան»

ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

«Նախ եւ մանաւանդ՝
 «Սեւ գիշեր եւ յուշեր եւ խոհեր
 անհամար
 Խնդրութիւն հեռացած եւ անցած
 եւ անդարձ, -
 Տրտմութիւն մեծաւոր, միա-
 ձայն, միալար...»
 Իսկ յետոյ յանկարծ՝
 «Ուզում եմ, վաղուայ ցնծու-
 թեան գուշակ՝
 Կարօտս նետած լուսեղէն հե-
 ռուն,
 Վառել երգերս որպէս դրօշակ...»
 Առեղծուած էր, թէ հակասու-
 թեան թնձուկ: Մութ ու ցուրտ
 անո՞ւրջ էր մթնշաղի, թէ՛ առտ-
 ուայ գեղածիծաղ լոյս: Դեռ՝ աշնա-
 նային մեղմագեղ թախի՞ծ անհաս-
 նում, թէ՛ գարնան երգ վառման:
 Վհատութիւն յուսաբեկ, թէ՛ լա-
 վատես խնդութիւն: Ո՞ր մէկն էր
 Տէրեան բանաստեղծը: Հարցեր՝
 որոնք դեռ երէկ չէին յարուցուել
 մեզի համար, մեր ակամայ անգի-
 տութեան պատճառով: Որովհե-
 տեւ, եղաւ ժամանակ, երբ մեր
 դպրոցական սեղաններուն դրուե-
 ցաւ միայն «Մթնշաղի Անուրջ-
 ներ» գիրքը եւ Վահան Տէրեան
 մեզի ներկայացուցեց թախի՞ծի ու
 մշուշի երգիչը որպէս: - «Վահան
 Տէրեան երգած է մշուշը, ցաւը,
 նրբութիւնը, անձին նուազկոտ
 տաղանայանքը եւ լուսնայային
 փափկութիւնները, որոնք մեր հո-
 գիներուն խորը երբեմն կը յամա-
 ուին, փոխարինելու չափ օրուան
 արեւը,» պատգամած էր մեզի մեծն
 Օշական, («Արեւմտահայ Գրակա-
 նութիւն», էջ 598):
 Սակայն եւ այնպէս, նոյնիսկ
 միակողմանի ձեւով ներկայացուած
 Տէրեանն իսկ պիտի դառնար պաշ-
 տելի անուն մը մեզի, համար

որովհետեւ անոր քնքուշ եւ թախ-
 ծալուր երգերուն մէջէն կը ճառա-
 գայթէր բիւրեղաճանձն ու վճիտ
 հոգին իսկական բանաստեղծին, շնոր-
 հիւ նուրբ ու շքեղ անոր արուես-
 տին, երաժշտական ու քնարական
 լեզուին ու ոճին: Իսկ երբ ունե-
 ցանք կարելիութիւնը հաղորդուե-
 լու տէրեանական ամբողջական քեր-
 թողութեան, գտանք որ բազմա-
 կողմանի եւ բազմերանգ բանաս-
 տեղծ էր Տէրեան, բարդ՝ իր հոգիին
 մութն ու լոյսով, տարուբեր՝ կեան-
 քի տեղատուութեամբ եւ մակընթա-
 ցութեամբ: Ան, թախի՞ծին, ներքին
 տառապանքին, կարօտի մորմոքին,
 աշնան ու մթնշաղի մեղմ քնքու-
 թեան կողքին երգած էր նաեւ
 խիղճն ու վարուելը, սէրն ու կինը,
 Նայիրին ու Հոկտեմբերը, ցասումն
 ու ընդվզումը, պայքարն ու վառ
 յոյսը վաղուայ ծաղկումին: Եւ այս
 բոլորը՝ մարդկայնաբոյր հարա-
 զատ շունչով, նոր խօսքով եւ նուրբ
 արուեստով:
 Իր քերթողութիւնը դէպի արդ-
 իականութիւն մեծ ուստում մը ար-
 ձանագրելով արեւելահայ մեր քնա-
 րերգութեան մէջ, դարձաւ լուսա-
 լոր սահմանագիծ-անկիւնադարձ մը
 բախտորոշ: Սահմանագիծը՝ հին
 աւանդին եւ անկիւնադարձը նոր
 խոյանքին: Իրմէ առաջ կային
 թումանեանն ու Խահապետեանը: Իր-
 մէ ետք եւ իրմով եկաւ Չարենցը:
 Իր քերթողութիւնը անկարելի դար-
 ձուց շարունակութիւնը բարբա-
 ուային, անվերասլաց այն բանաս-
 տեղծութեան, որ ժողովրդայինի
 եւ իրապաշտութեան պիտակում-
 ներով կ'արդարացնէր իր գոյու-
 թիւնը: Այս է նշանակեր սակայն
 ուրացումը թումանեանին եւ Խա-
 հապետեանին: Ընդհանուակը, իր
 առաջին քայլերուն ան կը սնանէր,
 կ'աւելորուէր անոնցմով: Բայց

եւ այնպէս, իր ծաղկումն ու պտղա-
 ւորումը պիտի ըլլային տարբեր՝
 անտոնակոխ ուղիներով եւ հանգր-
 ուաններով: Տէրեանի զգայնութիւնը
 այլ երանգի բունկումներով փայլա-
 տակեց, իր արուեստի ըմբռնումն
 ու իրագործումը պարզապէս տար-
 բեր տեսլականներու հետամուտ
 եղան: Գաւառային սահմանափակ-
 ուածութիւնը, գեղջուկ պարզու-
 նակութիւնը, անփոյթ հանդերձան-
 քով հրամցուած ճաշակն ու ձեւը
 ա՛յլ չէին կրնար որեւէ հեռանկար
 խոստանալ քսաներորդ նոր դարու
 լուսաւոր սեմին հասած, մեծ մայ-
 րաքաղաքներու արագաթոյն կշռոյ-
 թին, լայն մտածողութեան մատ-
 չած քաղաքացի բանաստեղծին:
 Տէրեանին վիճակուեցաւ ամէն բա-
 նէ առաջ, մեր արեւելահայ բանաս-
 տեղծութեան բերել քաղաքներու
 հեւքն ու տաղանայ, կշռոյթն ու
 զգայնութիւնը, մտածողութիւնն
 ու ճաշակաւոր վայելչագեղութիւնը:
 Անշուշտ էմիլ Վերհարն մը չեղաւ
 ան: Հեռու մնաց քաղաքերգութե-
 նէն: Քաղաքներուն մեքենական,
 գործարանային ծուխն ու ժխորը
 չէ որ նկարեց ան, եւ ոչ ալ՝
 պողոտաներուն եւ գոհններուն հե-
 ւասապառ վազքն ու հրմշտուկը:
 Այլ տուաւ քաղաքային մարդուն բարդ
 ու խրթին ներաշխարհը, անոր
 աշխարհահայեցողութիւնը, կեան-
 քին կշռոյթը: Տէրեան անպեղ հո-
 րիզոններու գեղեցկութեան հետամ-
 տողը դարձաւ: Իր կիրթ ու գեղա-
 գէտ ճաշակով մաքրեց, գտեց, յղկեց
 եւ նրբացուց արեւելահայ քերթո-
 դութեան լեզուն: Անոր ընձեռեց
 նրբերանգներու կախարդանքը եւ
 զայն դարձուց անելի երաժշտական
 ու ճկուն: Տուաւ արդիականու-
 թեան փայլն ու վայելչագեղու-
 թիւնը: Կարելիութիւնը՝ միանգա-
 մայն բարդ ու նուրբ հոգեվիճակ-
 տելու: Ու Տէրեանի մօտ, նրբերան-
 գի հասկացողութիւնը չի սահմա-
 նափակուել լոկ լեզուական, բառե-
 րու, պատկերներու եւ երանգներու
 նրբահիւսութեամբ, ո՛չ իսկ նրբա-
 ձայնութեամբ, այլ կը դրսեւորուի
 եւ կ'ամբողջացուի նաեւ մտածումի,
 զգացումի, կեցուածքի եւ ապրում-
 ներու նրբակերտ շարաբերակա-
 նութեամբ: Այսպէս՝ իրեն համար
 սենն ու սպիտակը, մութն ու լոյսը,
 վիշտն ու խիղճը, իրականն ու
 վերացականը հակոտնեայ, իրերա-
 մերժ կաղապարումներ չեն, այլ՝
 համատեղելի, գուզընթաց, գիրար
 ամբողջացնող եւ գիրար բացատ-
 րող իրադրութիւններ, որոնք կի-
 սաշէշտերու, լուսաստուերներու եւ
 միջնեանգներու կախարդանքով
 կը ստեղծեն ոգեղինացած աշխար-
 հը տէրեանական բանաստեղծու-
 թեան, ուր ամէն ինչ, ամէն իր ու
 էակ իր շուրջ ունի ինքնուրոյն
 լուսային, հնչական եւ երանգային
 ճառագայթում ու թրթռացում, վա-
 րանող, սրսփացող ձեւն ու կերպա-
 րը, գորս կարելի է նրբերանգներու



նօսրութեամբ միայն արտայայտել
 եւ թելադրել՝ յաճախ բառերուն
 սոսկական իմաստէն աւելի անոնց
 հնչական գունեղութեամբ, անոնց
 արթնցուցած զգայական արձա-
 նագներով: Տանք անի մը յատկան-
 շական նմոյշներ.


«Օտար դաշտերի անանց մշու-
 շում,
 Տխուր լուսեան գիշերն է իջել.
 Իմ սիրտը յաւեւ թախի՞ծն է մա-
 շում,
 Մի լուսէ երգ է իմ հոգում նա-
 գել...»

Այսպէս՝ «տխուր լուսեան
 գիշեր», «սիրտը յաւեւ մաշող
 թախի՞ծ» եւ «մի լուսէ երգ»,
 այնքան բնականօրէն մէկտեղուած
 քով քովի՝ առանց ջանքի եւ հակա-
 սութեան: Որովհետեւ, «տխուր
 լուսեան գիշերը» անթափանց,
 սեւ գիշեր չէ, այլ՝ դաշտերու
 նոյնիսկ անանց մշուշը անոր տուեր
 է թափանցկութիւն մը, մշուշի
 յատուկ կաթնալոյս մը, որ կը
 դիւրացնէ սրտի մաշող թախի՞ծին
 փոխակերպումը «լուսէ երգ»ի:

Իսկ ուրիշ տեղ մըն ալ՝
 «Մի անճանօթ ձեռք, նուրբ մշու-
 շում,
 Անցեալն ու ներկան իրար խառ-
 նում,
 Իմ սրտում ոսկէ անձրեւ է մա-
 ղում:
 Մի քնքուշ լոյս կայ իմ հոգու
 համար,
 Ամէն ինչ ունի չմեռնող մի կեանք,
 Կայ խորհրդաւոր դիւրող մի խա-
 վար,
 Ուր բախտից քաղցր են
 տրտունց ու սխրանք»:

Հոս ալ՝ «մշուշ, ոսկէ անձեւը
 մաղուող եւ քնքուշ լոյս» մէկտեղ-
 ուելով «գիւթող խաւար»ին եւ
 «բախտից քաղցր տրտունց-
 տխրանք»ին հետ, կը ստեղծեն
 մութն ու լոյսի այնպիսի վէտովի-
 տում մը, երանգներու թափանց-
 կութիւն մը, ուր հոգեզմայլանքի
 վիճակը կը դառնայ բնական հոգե-
 վիճակ:

(Շարունակելի)



NATIONAL NOTARY ASSOCIATION
 NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
 ghdepoyan@gmail.com

Երբ Ստու՛մ Եմ

Շարունակուած էջ 2-էմ

Քոչարեանի «միացման» տարբերակում է Լաչինի ողջ շրջանը փոխակերպուել Հայաստան-Լեռնային Ղարաբաղ «ցամաքային միջանցքի»։ Այդ Ռոբերտ Քոչարեանի օրօք է դրան համարժէք Նախիջևան-Ատրպէյջան միջանցքի գաղափար ծնուել։ Տիգրան Թորոսեանը նաեւ ստու՛մ է, երբ ասում է, որ «մարդիկեան սկզբունքները» որպէս բանակցութիւնների հիմք ընդունել են Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը եւ Ատրպէյջանը։ «Մարդիկեան սկզբունքները» պաշտօնապէս ընդունել է միայն Հայաստանը։

Ատրպէյջանն այն մերժել է մերժում է, իսկ Լեռնային Ղարաբաղը միջնորդներից նման ուղղակի առաջարկութիւն թէեւ չի ստացել, բայց բազմիցս յայտարարել է, որ կարգաւորումը չի կարող ենթադրել վերադարձ անցեալին ոչ կարգավիճակի, ոչ սահմանների

առումով։ Իսկ արդէն այսօր Լեռնային Ղարաբաղը շատ յստակ ձեւակերպում է ատրպէյջանական օկուպացիայի տակ գտնուող շուրջ 1000 քառակուսի քիլոմէթր տարածքի վերադարձի խնդիրը։ Բանակցային դիրքորոշում, որ Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի քսանամեայ իշխանութեան շրջանում երբեք չի բարձրաձայնուել եւ առաջին անգամ հնչեցուել է Հայաստանի ԱԳՆ՝ սոյն թուակաւի Յունիսի 13-ին Շահումեանի շրջանի օկուպացման 28-րդ տարեկիցի առթիւ տարածած յայտարարութեամբ։

Քաղաքական գործիչ Տիգրան Թորոսեանն ազատ է ենթարկելու իրաւունքը։ Համակրութիւնների հարցում եւ կարող է խնկարկել Ռոբերտ Քոչարեանին։ Քաղաքագետ Տիգրան Թորոսեանին տրուած է իրողութիւնները նենգափոխելու եւ հանրութեանը մանիպուլիացիայի ենթարկելու իրաւունքը։

« ՀՐԱՊԱՐԱԿ »

Հայաստանցի Սփիւռքահայր

Շարունակուած էջ 13-էմ

սակայն, հիմնականում առժամաբար են իրենց ապահով զգում Պուտինի թեւի տակ։

Եթէ չեմ սխալուում, Նաիրա, դու խօսել ես նաեւ Հայոց լեզուն մաքրելու մասին։ Կարծիք կայ, որ կարեւորը հայերէն խօսելն է, կարեւոր չէ թէ դա որքանով է հայերէն։ Ես երկու օրինակ կը բերեմ եւ դու, որպէս փորձուած լրագրող, ապագային լրջօրէն կ'անդրադառնաս այդ նիւթին։ Յիշեցնեմ, որ ես, որպէս լրագրող, 1957 թուականից սկսեալ ՍՍՀՄ Լրագրողների Միութեան անդամ եմ եղել եւ առաջին թիւթակիցներից մէկը նորաստեղծ «Երեկոյեան Երեւան» օրաթերթի։ Այսպէս ուրեմն՝ Երկու հարողովարներ (տղամարդ եւ կին) հերթական խաղահարդրման աւարտին, տղամարդը ի լուր աշխարհի դիմում է յաղթողին.

- Պիցան հետեից գալիս ա...
- Գնացէք ձեզ կշտացնելու,- աւելացնում է կինը։ Յաջորդ գաւեշտը՝ իմ «ՆԱ եւ ՆԷ» երգիծական շարքից։ Ծնողին ուղարկուած թուղթիկի բովանդակութիւնից.

«Միակ ծրագիր աշակերտներու ՎԱԽՃԱՆ-ՏԱՐԵԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ», Ձեր ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ դպրոց ԲԵՐԵՔ Դէկտեմբեր 5. առաջ կամ ՀԵՏԵՐՆԻԹ բերեք երբ ՔԱՔ ընտանիքի տօնական ուրախ ԵՐԵԿՈ Դեկտեմբեր 5-ին»։

Նէ,- Ի՞նչ կ'ուզէիր, որ ըլլայ... դեռ ք.ք.-մաք, նորէն հայու

հոտ կայ մէջը... վաղը միւս օր այդ հոտն ալ պիտի չունենանք...

- Ի՞նչ անենք տիկին Նաիրա, ընդունե՞նք նման «հայերէնը», թէ՛ պախարակենք։ Այս հարցն էլ որպէս մեղմացուցիչ հանգամանք ընդունէք իմ քո հասցէին արուած իրաւացի մեղադրանքների առնչութեամբ։

Ձեմ ուզում աւելին ասել, լրագրի էջերը այդ հնարաւորութիւնը չեն տալիս։

Այս մի քանի տարին, հիմնականում Թաւշեայ Յեղափոխութիւնից յետոյ, մշտապէս հետեւում եմ Հայաստանի քաղաքական վայրի վերումնեցում լի կեանքին, եւ միշտ ինձ հարց եմ տալիս, թէ ինչո՞ւ է Նաիրա Ձոհրապետանը անընդհատ գայրալից, առանց ժպիտի կանգնում ամբիոնի առջեւ, ինչպէս նաեւ նոյնքան անշնորհ ձեւով իրեն պահում հասարակ ժողովրդի հետ հանդիպումներ ունենալիս։ Պատճառը իր խոստովանութեան մէջ է։ Ահա թէ ինչ է գրում նա.

- «Տարիներ շարունակ ես ընկալուել եմ որպէս խիստ, ջղային ու ազդեալի (գուցէ՛ հարձակողակա՞ն, ՀԵՆ. Ա.), իրականում դրա հակապատկերը լինելով։ Ես շատ խոցելի եմ։... Մարդ պիտի կարողանայ ճիշդ ժամանակին իր տեղը գիշել առաւել պատրաստուածին»։

- Բրաւօ... ուրեմն ճիշդ ժամանակն է, որ դուք Ձեր տեղը գիշէք «առաւել պատրաստուածին»։ Սակայն չմոռանաք Ձեզ հետ տանել Գեւորիկին՝ Գեորգ Պետրոսեանին...

Քաղցրիկ Պուրճ-Համնուտ (6)

Շարունակուած էջ 13-էմ

մինչեւ կռնքը, հանդերձ դէմքին կրած փոփոխութիւններով՝ յօնքերուն պուստումը, շուրթերուն պրկումը, այտերուն լարումը. ասոնք բոլորը պահիկ մը կը լիցքաթափուէին ու կը հանդարտէին, երբ գաւազանը վայրագ շառաչունով իջնէր գոհի ձեռքին, բայց պահիկ մը միայն, մինչեւ որ վերագտնէր ուժերը,- քանի նիհար, վատուժ, ժամանակէն առաջ ծերացած ու հիւժած մարդ էր,- եւ ապա վերսկսելու համար։

Աբգարեանը աւարտելէս քանի մը տարի անց էր։

Անգամ մը հանդիպել էի ելեկտրագործ գարմիկիս՝ սինեմաերթալու համար, երբ յայտնեց, որ պէտք է քառորդ ժամ մը հանդիպի ինչ-որ «յաճախորդի մը», պատիկ նորոգութեան մը համար։ Ուստի ընկերացայ իրեն։ Քառանթիւնայի հիւղաւանին մէջ էր անոր տունը, Sleep-comfort-ին կից, երկյարկանի տախտակաշէն ու խարխուլ խրճիթ մը։ Սկսանք բարձրանալ սանդուղէն։ Վախով կը փոխէի քայլերս ու կը հանգչեցնէի ոտքս աստիճանին վրայ, որ կը ճռնէր։ Աւելի վախազու էր բազրիքը, որ կը խաղար ամէն բռնելուս։ Չղջացի գալուս, վերջին հաշուով ինչ գործ ունէի, բայց նաեւ ինչ գիտնայի, երբ դուռը բացուեցաւ ու դէմ-յանդիման եկայ... պարոն կարայակոբեանին ու անոր երկու քոյրերուն. անոնք եռուորեակներ ըլլալ կը թուէին։ Բնագրական ստակում մը պատեց էութիւնս, որուն պատճառը միջկտայնոց ամբողջ վերջուշէր էր այնքան, որ քան մարդկային ու նիւթական այն խոր թշուառութիւնը, որ կը պարզուէր աչքերուս առջեւ։

Ինձմով զբաղելու առիթ չունեցան։

Ես նստած էի խեղճուկ սենեակի մը մէջ, ուր ամէն առարկայ

մուսլ, մաշած ու վանողական էր, եւ այնպէս կը կարծէի, թէ առաստաղն ալ, սանդուղին ու բազրիքին օրինակով, փուլ պիտի գայ գլխուս։ Ու տարուեցայ մտովի վերականգնելու այս մարդուն առօրեան. ուրեմն ամէն առաւօտ այս նոյն խախուտ աստիճաններէն կ'իջնէր ան՝ բռնելով նոյն երեքուն բազրիքը։ Կը քայլէր մինչեւ Նոր Հաճըն, այսինքն՝ մօտաւորապէս 500 մէթր՝ առնելու համար հերթական հանրակառքը, վճարելով հինգ դահեկան, որմէ քիչ ետք պէտք է ետ իջնէր՝ դա՛րձեալ նոյնքան մը քայլու համար, որպէսզի դպրոց հասնէր։ Անձրեւային եղանակին ան պարտէր այս ամբողջ միջոցին կրել հովանոց մըն ալ՝ փորձելով շրջանցել ճամբու ցեխն ու լճակները մինչեւ դպրոց, ուր իր աշակերտները, նախաճաշի վերջին պատուր ծամելով, ժիր ու թեթեւ կը հասնէին մէկ շունչով։ Երեկոյեան ան պէտք է հետեւէր հակառակ երթուղիին՝ ելլելու համար այս նոյն աստիճաններէն, բռնելով նոյն բազրիքը ու մտնելով այս նոյն անհրապոյր սենեակը - ուր ես հիմա նստած էի,- ու դիմաւորէր զոյգ քոյրերը։

Փղջկում մը կը զգայի կուրծքիս տակ եւ դժուար կը շնչէի։

Երբ վերջապէս եկաւ գարմիկս ու փրկեց կացութիւնը։


Ճամբան, ինչպէս շարժապատկերի ողջ տեւողութեան ալ, կը շարունակէի մնալ կրած ազդեցութեանս հողմապտոյտին մէջ, երբ կամաց-կամաց հարց մը իր ամբողջ տարողութեամբ ծագեցաւ մէջս ու փոթորեկեց գիտակցութիւնս.

-Այս թշուառութեան հետեւանքը չէ՞ր արդեօք այն դաժանութիւնը, որ երկրորդ բնութեան մը պէս հաստատուել էր ուսուցիչիս մէջ ու կը հայածէր զինք եւ որուն առաջին ու մեծ գոհը ինք էր, ապա շրջապատը եւ ի վերջոյ մենք՝ աշակերտներս...

armenag@gmail.com


VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ։



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



ՄԴՎԿ-ի
Խորհրդատուական Գրասենեակ
(888) 908-1887
contactus@aebu.org

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net

Յայտնի է Ախոյեանների Լիգայի 1/4 եւ 1/2 Եզրափակիչների Վիճակահանութեան Արդիւնքը



ՈՒԵՖԱ-ի շտաբ-բնակարանում կայացաւ Ախոյեանների լիգայի ընթացիկ մրցաշրջանի 1/4 եւ կիսաեզրափակիչ վիճակահանութիւնը:

1/4 եզրափակիչ
 «Ման. Սիթի»-«Ռեալ» գոյգի յաղթողը կը մրցի «Յուվենտուս»-«Լիոն» գոյգի յաղթողի հետ:
 «Լեյպցիգ» - «Ատլետիկո»
 «Բարսելոնա»-«Նապոլի» գոյգի յաղթողը կը մրցի «Չելսի»-«Բաւարիա» գոյգի յաղթողի հետ:
 «Ատալանտա»-ՊՍՅԿ
 Կիսաեզրափակչում 1/4 եզրափակիչ առաջին գոյգի յաղթողը կը խաղայ երրորդ գոյգի յաղթողի հետ:
 Երկրորդ գոյգի յաղթողը կը մրցի «Ատալանտա»-ՊՍՅԿ գոյգի յաղթողի հետ:

Վիզալի Կուլը Յաղթանակ բերեց «Բարսելոնային»



Սպանիայի առաջնութեան 36-րդ տուրում ախոյեան «Բարսելոնան» մրցակցի խաղադաշտում հանդիպեց «Վալիադոլիդի» հետ եւ յաղթանակ տարաւ նուագագոյն հաշուով:

15-րդ րոպէին մրցակցի դարպասը գրաւեց չիլիացի կիսապաշտպան Արաուրո Վիզալը: Կուլային փոխանցումը կատարեց արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին: «Բարսելոնան» 79 միւստրով երկրորդ տեղում է եւ մէկ հանդիպում քիչ անցկացրած «Ռեալից» հետ է 1 միւստրով: «Վալիադոլիդը» 14-րդն է՝ 39 միւստրով:

Բունդեսլիգայի Յաջորդ Մրցաշրջանը Կը Մեկնարկի Սեպտեմբերի 18-ին

Ֆուտպոլի Գերմանիայի Բունդեսլիգայի յաջորդ մրցաշրջանը կը մեկնարկի Սեպտեմբերի 18-ին: Առաջին տուրի հանդիպումները տեղի կ'ունենան Սեպտեմբերի 18-ից 21-ը, յայտնում է մրցաշարի մամուլի ծառայութիւնը:

Սեպտեմբերի 11-14-ը տեղի կ'ունենան Գերմանիայի գաւաթի խաղարկութեան առաջին շրջանի հանդիպումները:

Ձմեռային արձակուրդը կը կրճատուի: 14-րդ տուրի հանդիպումները տեղի կ'ունենան Յունուարի առաջին հանգստեան օրերին:

Յիշեցնենք, որ Գերմանիայի ախոյեանի կոչումը 8-րդ տարին անընդմէջ նուաճել է Միւնխենի «Բաւարիան»:



«Ռոման» Վատահ Յաղթանակ Տօնեց



Իտալիայի առաջնութեան 32-րդ տուրում «Ռոման» հիւրընկալուեց յետնապահներից «Բրեշիային» եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշուով:

48-րդ րոպէին հանդիպման հաշիւը բացեց «Ռոմայի» արժենթինացի պաշտպան Ֆեդերիկօ ֆասինոն, 62-րդ րոպէին սպանացի յարձակուող Կառլոս Սալոյի փոխանցումից յետոյ հիւրերի առաւելութիւնը կրկնապատկեց խորուած յարձակուող Նիկոլա Կալինիչը: 74-րդ րոպէին հաշիւը 3:0 դարձրեց իտալացի կիսապաշտպան Նիկոլո Չանյոլոն: Կուլային փոխանցումը կատարեց արժենթինացի յարձակուող Դիեգօ Պերոտին:

Հայաստանի հաւաքականի եւ «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը դեղին քարտերի պատճառով որակազրկուած էր մէկ խաղով եւ չմասնակցեց այս հանդիպմանը:

«Ռոման» 54 միւստրով 5-րդ տեղում է, «Բրեշիան» նախավերջինն է՝ 21 միւստրով:

Ռումինիայում Մրցավարը 3 Անընդմէջ 11 Մեթրանոց է Նշանակել. 3-ն էլ Վրիպել են

Ռումինիայի առաջնութեան «Պետրոլուլ»-«Ռապիդ» հանդիպման ժամանակ մրցավարը 3 անընդմէջ 11 մեթրանոց է նշանակել հիւրերի դարպասին:

Առաջին 11 մեթրանոցը նշանակուել է 65-րդ րոպէին: Հիւրերի դարպասապահ Միխայ Պոպոն հետ է մղել հարուածը, սակայն մինչ այդ դարպասային գծից առաջ է եղել: Մրցավարը հրահանգել է կրկնել հարուածը եւ դեղին քարտ է ցոյց տուել դարպասապահին:

Երկրորդ հարուածը դաշտի տերերի մէկ այլ խաղացող է իրացրել ու Պոպոն նորից հետ է մղել այն, սակայն կրկին կանոնների խախտումով: Մրցավարը նորից հրահանգել է կրկնել հարուածն ու Պոպոյին երկրորդ դեղին քարտն է ցոյց տուել՝ հեռացնելով դաշտից:

Երրորդ դէպքում «Պետրոլուլի» խաղացողը շեղ է հարուածել: Արդիւնքում՝ հանդիպումն աւարտուել է 0:0 հաշուով:

«Մանչեսթեր Սիթիին» Թոյլատրուեց Մասնակցել Ախոյեանների լիգային

Լոզանի մարզական արբիտրաժային դատարանը (CAS) բաւարարել է անգլիական «Մանչեսթեր Սիթիի» բողոքարկումն ընդդէմ ՈւեՅԱ-ի ընդունած որոշման եւ թոյլատրել է անգլիական ակումբին մասնակցել Ախոյեանների լիգային:

Դատարանը չհեղարկել է ՈւեՅԱ-ի որոշումը՝ ուժի մէջ թողնելով միայն 10 միլիոն տուգանքի վճարման պարտաւորութիւնը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----